



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1899

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՀԱՐԻՐԱՄԵԱՅ ՅՈՐԹԵԼԵԱՆԻ

Ս. ԼՈՒՍ. ԱԶԳ. ՀԻՒԱՆԳԱՆՈՑԻՆ

ԶՄԻՒՈՆԻՈՅ

1801-1901



362

S-30

ՏՊԱԳԸ ՄԱՄՈՒԿԵՆ

—
1901

068
-30

Հովհ. Յ. Գաբրիելյանի
1 MAR 2010

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՐԻՐԱՄԵԱՅ ՅՈՐԵԼԵԱՆԻՆ


Ս. ԼՈՒՍ. ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՅԻՆ

ԶՄԻՒՆԻՈՅ

370

2331-56

66751




ՏՊԱԳՐ. ՄԱՄՈՒՐՍՆ

1901

13 AUG 2013

ԵՐԿՈՒ ԲՈՍՑ



ՊԵՉՄԻՐԻ Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԵԱՆ ԱԶԳ. ՀԻՒԱՆԳՈՆՅԻ արդի
 Պատ. Հոգաբարձութիւնը նկատելով որ առաջիկայ Յոգոսոս
 ամսուն այս մարտասիրական հիմնարկութիւնը հարիւր տար-
 նան շրջան մը կ'ընթացնէ՝ 1801 Օգոս. Կն սխեւալ, գեղեցիկ
 եւ գովելի գաղափարը կ'ունենայ համազգային հանդեսով մը
 տօնելու Հիւանդանոցի հաստատութեան ՀԱՐԻՐԱՄԵԱԿԸ: Այս
 նպատակաւ 26 Մարտ 1901 եւ 63 թուահամար պաշտօնագրով
 հրաւեր կ'կարդայ մի քանի ազգայիններու եւ կ'կազմէ Յանձ-
 նաժողով մը որ պաշտօն ունենայ հարիւրամեակի հանդեսը
 կազմակերպելու համար հարկ եղած նախապատրաստական
 գործողութեանց ձեռնարկելու: Եանձնաժողովս սիրալոյսով
 ընդունելով իրեն եղած այս առաջարկը՝ անմիջապէս գործի
 կ'սկսի, կ'կազմէ իր դիւանը եւ մի քանի նիստերու մէջ կար-
 ծիֆներու փոխանակութենէ եւ խորհրդակցութենէ յետոյ կ'ո-
 բոշէ նախ՝ պատրաստել եւ սպարել համառօտ Տեղեկագիր մը,
 անոր մէջ պատկերացնելով Հիւանդանոցի անցեալը եւ հա-
 րիւրամեայ շրջանի մէջ անոր կրած զանազան փոփոխութիւն-
 ները եւ աստիճանական զարգացումը. երկրորդ՝ առիթէն օգ-
 տուելու եւ հարիւրամեակի հանդեսէն Հիւանդանոցի համար
 նպատաւոր արդիւնք մը ձեռք բերելու նպատակաւ՝ որկեր սոյն
 Տեղեկագրէն մօտաւոր ու հեռաքնակ ազգայնոց, ծանուցանե-
 լով հանդեսին նպատակը. երրորդ՝ ընելով իրենց գրութեան եւ
 մարտասիրական զգացմանց եւ խնդրելով իրենց մասնակցու-
 րիւնը հարիւրամեայ յոբելեանին:

Եանձնաժողովս աւելորդ չհամարիր յիշատակել թէ ներկայ
 Տեղեկագրի պատրաստութեան համար, որու խնդրագրութեան

գործը յանձնեց իր անդամակիցներէն Կ. Նաւասարդեանի. իբր
 աղքիւր կամ առաջնորդ ունեցաւ Ազգ. Առաջնորդարանի դի-
 ւանատան մէջ պահուած մի ֆանի հասակոսոր պէսական պաշ-
 տնագրէր, մէկ երկու հիւն հաշուէտնարներ, ակակասեա կամ
 ակակաշարուր ծերունիներու վկայութիւնսք եւ վերջապէս շրա-
 գրութիւնք՝ մանաւանդ 79 ի վերաշինութենէ յետոյ: Յաւալի
 է որ ժամանակը, անհոգութիւնը եւ մերք ընդ մերք պատ-
 հած հրդեհները փճացուցած են քանկագիւն եւ կարեւոր պաշ-
 տնագրէր եւ արձանագրութիւններ, որոնք քերէա կրկայիւն
 աւելի մեծ շոյս մը սփռել մեր Հիւանդանոցի անցելոյն վրայ:



Յասեկի Ազգային Վարչութեանս խորին ուշա-
 դրութեան առնուեցաւ Հիւանդանոցի Գոստարժան
 Հոգաբարձութեան Աւայտեմքեր 1 գիրն եւ ընդ նմին
 Յոքիլեանի բարեջան Յանձնաժողովոյ խոգարկու
 հետսսննութեամբ պատրաստած Հարիրամեկի ըն-
 դարձակ Տեղեկագիրն, եւ որոշուեցաւ արտօնել յիշ-
 եալ Տեղեկագիրն հրատարակութիւնն, խաչաշոյս շի-
 նելով թէ՛ բարեւեր Ազգային պիտի պատկեն Հար-
 իրամեակն իրենց ստատաննն նմիրօք յօգուտ յիշ-
 եալ գրութեան բազմակարճ Յարկին:

ԱՌՈՋՆՈՐԴ ԶՄԻՐՆԻԱ

ՄԵԼԲ. ԱՐԴԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՈՒՐՍԵԱՆՅ

(Կէփ)



ՏԵՂԵԿԱԳԻՐ

Հարիւրամեայ Յորելեանիմ

Ս. ԼՈՒՍԱԿՈՐՉԵԱՆ ԱՉԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ

Հիմնուելով մեր ձեռքն ունեցած աւելի կամ նուազ վաւերական աղբիւրներու վրայ և առաջնորդուելով ասոնց ճշտապատում և մերթ հաւանական ծանօթութիւններէն, կրնանք երեք սրոշ շրջաններու բաժնել ներկայ Տեղեկագիրը:

Ա. Շրջան. — 1801 և 1842. այս շրջանը իր մէջ կ'պարունակէ ո՛չ միայն 1801 ի վերաշինութեան սլարագանները, այլ նաև այս թուականէն շատ առաջ արդէն գոյութիւն ունեցող հիւրանոցի, աղբատնոցի և նախնական հիւանդանոցի վիճակը:

Բ. Շրջան. — 1842 և 1879

Գ. Շրջան. — 1879 և 1901

ԱՌԱՋԻՆ ԶԲՁԱՆ

1801 — 1842

Իդմիրի հայ դպրութեանութիւնը, որ մտատորապէս 480 տարւան գոյութիւն մը ունի, հաւանաբար իբր տոհմային հիմնարկութիւն ի սկզբան ունեցած է միայն եկեղեցի մը և զերեւմանատուն մը, երկու անհրաժեշտ կրօնական հաստատութիւններ, մին իր հայրենի դարաւոր հաւատքը հաստատուն պահելու և այլ հաւատքին պարտադրած կրօնական պաշտամունքը կատարելու, և միւսը աշխարհէն հրաձարող իր սիրելեաց մարմնաւոր նշխարները ամբիփելու և անոնց յիշատակը բանդակեալ շիրիմներով անմոռաց պահելու համար: Սակայն ժամանակի պահանջները և նորանոր պէտքերը հեղհեղ ծնունդ առած են ուրիշ կարգի հիմնարկութեանց:

Ինչպէս միշտ կ'պատահի վաճառաշահ քաղաքներու համար, Իզմիր ևս իր ծովեզրեայ նպաստաւոր դիրքով և շահապատանի վազեմի համբաւով, մանաւանդ հոն հաստատուած հայ գաղութին տակաւ առ տակաւ նիւթական բարգաւաճումը և բոհարական յառաջիմութիւնը մեծ հրապոյր ունեցած են թէ՛ բնաշխարհի և թէ՛ օտարութեան մէջ ցրուած հայ ցեղակիցներու համար, առաւելապէս անոնց որ նիւթական զարգացման աննպաստ միջավայրերու մէջ տեւական և սպառնալից դիրքի մը տիրանալէ յուսահատ՝ հետամուտ եղած են աւելի մեծամեծ շահեր ընելու և բարեկեցիկ վիճակ մը ձեռք բերելու:

Այսպէս, դէպի 1750 — 1760 թուականները նորանոր հայ գաղթականներու հոսանք մը, զլիսաւորապէս Պարսկաստանէն սկսած է դիմել Իզմիր և անբնական չէ ենթադրել որ այս գաղթականաց մէջ զանուկին այնպիսիներ որ՝ աղքատ, զրամաղլիս զուրկ և նոր միջավայրին հանգամանաց, բարուց և սովորութեանց ու մանաւանդ լեզուին անտեղեակ՝ առժամանակ մը պէտք ունենային դոնէ առանց վարձքի զլուխնին փնելու և պատսպարուելու համար համեստ բնակարանի մը: Այս պէտքին գոհացում տալու համար բնականաբար չէր կրնար անտարբեր մնալ երկար տարիներէ ի վեր առնտեղ եղած և իր առևտրական գործը կարգի դրած Իզմիրի հայ գաղթականութիւնը ու իր նորեկ արեւակիցներուն օգնութեան ձեռք չկարկառել:

Հետեւապէս առաջին անգամ ըլլալով Իզմիրի հայ հասարակութիւնը եկեղեցիէ և դերեզմաննոցէ զատ՝ իրր սոհմային հիմնարկութիւն հիւանդանոցի մը պէտքը զգացած և գործադրած է ի պատճառ պարութիւն հետզհետէ Պարսկաստանէն և ուրիշ կողմերէ հասնող հայ պանդուխտներու: Այս այս կ'վկայէ 1762 ին դրուած հիւանդանոցի մը, որմէ կ'հասկցուի թէ Իզմիրի Հայ գաղթականութիւնը ասիէ մօտաւորապէս 200 տարի առաջ հաստատուած է հիւանդանոց մը (միսափիւրապէս) նորինորոյ գաղթող պարսկահայ (էրամիսէի աճեմ) պանդուխտներու համար: Այս հիւանդանոցը 100 տարիի չափ գոյութիւն ունենալէ և վերոյիշեալ թուականին տասը տարի առաջ կտրմանէ և յետոյ՝ վերաշինուած է գաղթականաց փոխանորդ Չելի անուն

անձին նախաձեռնութեամբ և ազգային անհատներու նպաստով, կրթնաբարձ Զեով, 7 սենեակ ստորին և 3 սենեակ վերի յարկին մէջ: Սոյն պաշտօնագիրը բացարձակօրէն կ'արգիլէ նոյն շէնքը գործածել իբր հիւանդանոց, կանթիղ վառել, եկեղեցական արարողութիւն կատարել, բահանայ կամ վարդապետ պահել հոն, վերջապէս եկեղեցի յիշեցնող ո՛ր և է բան պարունակել:

Միակայն ժամանակ անցնելով կ'երևի թէ Հիւրանոցը իբր հիւանդանոց պատսպարան գործածելու արդեւրը տակաւ մեղմացած է՝ հայ հասարակութեան կողմէ տեղական կառավարութեան եղած դիմումներուն և ինքրանաց վրայ, վասնզի 1790 թուականին զըրուած առուծախի թեմեստիքի մը մէջ կ'գտնենք հայ հասարակութեան յատուկ «խաւքալար օտասը կլգաֆընըն միսթիկիլիսի» բացատրութիւնը, որմէ կրնանք մակարեւրել թէ միևնոյն շէնքը՝ թէև ի սկզբան իբր հիւանդանոց շինուած՝ հիւանդանոցի և աղքատանոցի տեղ ալ գործածել արտօնուած է յետոյ:

Այս փոփոխութեամբ և նորեկ պանդուխտներու հետզհետէ աւելնալով կ'երևի թէ նեղ եկած է հիւանդանոցի շէնքը՝ պատսպարուելու համար պէտք եղածին չափ հիւանդներ կամ աղքատներ. ուստի 1801 ին այն ատենի դատաւորին կողմէ արուած միտքաւէկ մը՝ ուղղեալ հայ հասարակութեան փոխանորդ Տամվանի Ամուճա Ատեֆանին, կ'արտօնէ հիւանդանոցին մի բանի սենեակներու, խոհանոցի, մատանի և ուրիշ մասերու շինութիւնը կամ նորոգութիւնը:

Այսպէս սակաւ հիւրանոցը հիւանդանոցի վերածուած և հիւանդանոցը եղած է ազգային ուրոյն հաստատութիւն մը և այդ անունով ճանչցուած ու ընդունուած պաշտօնապէս տեղական կառավարութեան կողմէ, միշտ մատակարարուելով միսթիկիլիներու ձեռամբ, ինչպէս 1801 ին հիւանդանոցին համար Չեկպիզատեաներէ դնուած պարտէզի մը թեմեստիքին մէջ Հաճի Հայրապետ աղա (որի խաչատուրի) կոչուած է «միսթիկիլիի խրթալիս Վէ վեքիի միլիթի էրմեհիան», նոյն ժամանակի վոյվօտայիս կողմէ:

Այս առթիւ յիշենք ուրիշ մի բանի միսթիկիլիներու անուններ. 1772 ին Ստեփան Շահվէրիօֆ, որու միւթիլէլլութեան օրոյ Պանսերլիի որդի Պէօթէքճի Պանսեթօպուլօ Հիւանդանոցին ծախած

է իր մէկ կալուածը 150 դրուշի. այս ասուծարի հեօձձերը՝ յանա-
րէն գրուած՝ կ'կրէ 1772 Յունիս 4 թուականը. — 1790 ին Յա-
կոբ Խառնակեան, որու օրով Արեւիկի Գաթմէրճի Ալթամարի Հիւան-
դանոցի կից իր պարտէզին մէկ կտորը ծախած է նոյն հաստատու-
թեան 750 դրուշի. նախորդին պէս այս հեօձձերն ալ գրուած է յու-
նարէն և ունի 1790 Մայիս 16 թուականը. — 1801 ին Հաճի
Հայրապետ ազա, որու օրով Չէրեպիզատէնքէ գնուած է պարտէզի
մը կէսը Ալթամարուսունին համար 460 դրուշի, այս ասուծարին
թուականն է 1801 Ապրիլ 13: — Աւելի յետնագոյն ժամանակնե-
րու մէջ կ'ըլլան Մարտիրոս Գալֆա՝ 1815 ին, Կարապետ Յով-
հաննէսեան՝ 1820 ին, Ազար Կարապետեան և Մկրտիչ Կարապետ-
եան՝ 1827 ին, Անանիա Ստեփանեան և Գալուստ Մանուկեան
1842 ին, և այլն: Այս միւլթէլիէիները ամենքն ալ անձնուէր և
խղճամիտ աշխատողներ եղած են, միշտ ջանալով Ազգին տան պայ-
ծառութիւնը և բարեկարգութիւնը պահել՝ որչափ կ'ունեն միջոց-
ները և նարանոր կալուածներ, տուներ, խանութներ, պարտէզներ
և այլն զնելով ընդարձակել Հիւանդանոցի վերքը և աւելցնել նոր
հասոյթի աղբիւրները:

Սակայն հակառակ իր ունեցած սեփական եկամուտներուն՝
Հիւանդանոցը շատ անգամ ստիպուած է եկեղեցիէն կամ Ազգային
սնտուկէն լիցնել իր հասոյթներու պահար, այնպէս որ 1801 ին
Իզմիրի աստջնորդ Մարտիրոս Արքեպիսկոսոսի կիքով վաւերացեալ
և բազմատորարի գրութեամբ մը եկեղեցնապետական ութը տուն ևս
կ'ուսիրուի Հիւանդանոցին, որպէս զի անոնց վարձքով հիւանդները
խնամուին: Ահա աստիկ այլ գրութեան պատճէնը նոյնութեամբ:

Է

(Կրտ)
Մարտիրոս Ալթամարուսունի
Չմիւռնոյս հաւանութեամբ
մեծամեծաց համայնից կըն-
քեւի զոյս:

յԱմի Տեառն հազար ունի հարիւր
եւ մի, ՚ի յուծերորդն ամենանն Օ-
գոստոսի, Աստուծոյ ամենակարող
ամենակալ կամօք եւ յաշողու-
ծեամբ պայծառ յօրինուած ի, եւ վայելուչ ձեւակերպութեամբ
յանկ ելեալ կատարեցաւ շինուածն՝ Մեծի Քաղաքի Չմիւռնիոյ
Աղատանոցին. զոր բարեկարգ Գիտին մեր Տեառն Մարտիրոսի

Արհիապառ Եպիսկոպոսի ջանասիրութիւն եւ բնաւին մեծարգի
մեծատանց եւ համայն ժողովրդոցն բարեպաշտութիւն, եւ հո-
գեւէր միւլթէլիէի նորին Մահտեսի Հայրապետ Աղայի բանիւ եւ
գործով անխնոջ բարեջանութիւն եւ զուարթաւատ տուրջ
ամենեցուն նոցա մեծաց եւ փոշուց, որք երկնային լուսազարդ
խորանն ալն ունելով՝ աւատօրէն հանգամակեցին ի նոյն,
հանդիսագոյն եւ շքեղ զարդարեցին, երեւեցուցեալ ի նմա
զոյցս հոգեսիրութեան ի մշտնջինաւոր յիշատակ հոգւոց իւր-
եանց: Յոյր փոխարէն նա՝ որ ամենաբաւ առաւելութեամբ մե-
ծատուն էր Աստուածութեամբ, եւ ի մերակերպութիւն զիջեալ
աղքատացաւ, ի հաճոյս բարերար կամաց իւր ընկալեալ՝ զգեր-
աշխարհիկն շնորհեսցէ տաճար իւմնայի՝ ամենեցուն, որք ի նոյն
եղեն գործակից. ամէն:

Առդ՝ այսը այսպէս յաշողելոյ՝ խորհեալ համակամու-
ծեամբ, տեսաք, զի ոչ բաւէին հասց եւ մուտք արդեանց
ի պէտս անգամօր անկեղոց եւ հիւանդաց. քանզի եւ յառա-
ջագոյն իսկ յոչ բաւեան ի սրբոյ Եկեղեցւոյ նուին զպակասոր-
դն. ոյր աղագաւ միաբան հաճութեամբ զայնոսիկ ուծ տուես,
որք ՚ի ներքս դրան աղքատանոցին են, հաճեցաք հանել ՚ի հա-
շուէ վայսի տանց Յրբայ Եկեղեցւոյն եւ նուիրել զնոսա Աղ-
քատանոցին, որպէս զի այսուհետեւ նորուն Միւլթէլիէի առ-
եալ զլարծս այնոցիկ տանց՝ տացէ ի պէտս հիւանդաց: Եւ
ի հաստատութիւն իրիս անաւասիկ Գրեալ ստորագրեմք զայս
Գիր ամենեցին մօջ, եւ տամք ՚ի միւլթէլիէի աղքատանոցին. եւ
ցուցեալ սո լին զհաճութիւն մեր, կամիմք, զի եւ ամենից՝ որոց
հանդիպինս, յիցի հաճելի:

Յովհաննէս զի Եւոյի Սալուան	Դրուշակիւր Ստեփան զի Խաչատուր
Գեորգ զի Յարութեան	Օհան զի Եւան
Կարապետ զի Ջէպի	Էփէլեան Խաչատուր
Մահրեօ Յահաննէս զի Գ. Յ. Յայ	Չէրեպիզատ Պեղոս
Կարապետ զի Մհրտի. Յարութեան	Յարութեան զի Օհան Եւան
Մահրեօ Ալթարիկ Բրբրիկ	Պետրոս զի Մհրտի. Աղաճան
Մահրեօ Կարապետ զի Օլաւէս	Յահաննէս զի Խաչատուր
Մահրեօ Ա. Ս. Ս. Ս. Ս. զի Յ. Ս. Ս.	Մահրեօ Ուկան զի Խաչատուր
Ռեւիլիէ Մհ. Ալթարիկ զի Նաչար	Մահրեօ Կարապետ Չէրեպիզատ
Յովհ. Եւան	Մահրեօ Ա. Ս. Ս. զի Գ. Յ. Յայ
Մահրեօ Ա. Ս. Ս. Ս. զի Ս. Ս. Ս.	Մահրեօ Ալթարիկ զի Արեւիկեան
Մահրեօ Մարգի. Ա. Ս. Ս.	Սի. Ս. զի Յովհ. Վ. Ս.
Ռեւիլիէ Յարութեան զի Ա. Ս. Ս.	Պետրոս զի Պետրոս Եւան

Ինչպէս ակնյայտ կ'երևի վերոյիշեալ գրութենէն, 1801 ին կատարուածը՝ սխալ բայց ընդհանրացած կարծիքի մը համեմատ՝ ո՛չ թէ առաջին կառուցումը եղած է Հիւանդանոցին, այլ պարզապէս վերաշինութիւն մը՝ նախկին շէնքէն աւելի պայծառ և աւելի վայելուչ, և այս վերաշինութեան թուականը գրեթէ ճշտիւ կ'համապատասխանէ այն թուականին յորում հրաման տրուած է մի բանի սենեակներ, խոհանոց, մատան և այլ մասեր շինելու կամ նորոգելու, ինչպէս վերև յիշեցինք:

Սոյն այս 1801 ի վերաշինութեան յիշատակարանը երևան կ'երևէ 1879 ի վերջին վերաշինութեան պահուն. երբ 1842 ին վերաշինուած հին հիւանդանոցի շէնքը վար կ'անուռի, բաղնիքին յատակը բախելու ժամանակ կ'գտնուի մարմարէ յիշատակարան մը, որու բեկորներուն վրայէն կարելի կ'ըլլայ կարգաւ այս արձանագրութիւնը.

« Յիշարարարն Ս. Լուսաւորէան շէնքանոցին Ձգնուից: Եւստիանոսացոսն շէնքանոցին էր: Ե 1801 թուականի Փեհլին, է Հայրապետութեան Տեառն Դաւիթ Կաթողիկոսի օրհնայն Հայոց, է Պարտաւարութեան Սրբոյ Երեսուցի մայր Տեառն Թեոփրոսի Արեւելեակոսի, և է Պարտաւարութեան Կաթողիկոսապետայ Տեառն Յովհաննէս Արեւելեակոսի, և յԼուսաւորութեան Ձգնուից Տեառն Մարտիրոսի Արեւելեակոսի, որքեամբ և որովհետեւ հոմայն Ժողովրդեան փառասէս: »

Թե՛ այս յիշատակարանը և թէ վերի մէջ բերուած պաշտօնական գրութիւնը սա՛ միայն կ'հաստատեն թէ այժմու Հիւանդանոցի ընդարձակ տեղւոյն վրայ թէ և 1801 թուականէն առաջ գոնուած շէնքը կանոնաւոր և կարգաւորեալ հիւանդանոց մը չէր և ամեն պէտքերու գոհացում տալու անբաւական, սակայն նոյն թուականէն շատ տարիներ առաջ գոյութիւն ունէր ազգային հիւանդանոց մը կամ աղքատանոց մը՝ իր սեփական եկամուտներով, կալուածներով, իր միջոցներով և ինքնուրոյն մատակարարութեամբ, և ըստ ամենայն հաւանականութեան իւր սկզբնաւորութիւնն եղած է հիւանդոցի շինութեան համար տրուած արտօնութեան թուականէն բիշ տարի վերջը, 1760-1765 թուականներու միջոցին, ինչպէս կ'հաստատեն վերև յիշուած զանազան հեռագրերը և պաշտօնագրերը:

1801 ի վերաշինութեան գործին մէջ կարևոր բաժին և գործօն մասնակցութիւն մը ունեցած է այն ժամանակուան միջոցաւոր Հաճի Հայրապետ աղան՝ որու անունը օրհնութեամբ ու երաստապէս զգացմամբ կ'յիշուի իզմիրի հին և նոր սերունդէն: Այս բարեբարի թոնորդին Մեծ. Հայրապետ էՖ. Շահվէլքիւհան՝ Յանձնատոլոյ խնդրանաց վրայ՝ հաճած է ինչ ինչ տեղեկութիւններ հաղորդել իր բարեյիշատակ պապուն գործունէութեան վրայ. սակայն զանց կ'ընենք յիշատակել Տեղեկագրոյս մէջ այլ պատմական ծանօթութիւնները՝ թողլով զանոնք ասպագայ պատմադրին:

Չի մոռնանք յիշել որ 1801 ին վերաշինուած Հիւանդանոցի շէնքը կ'պարունակէր ընդարձակ սրահ մը, ալ ու ձախ կողմէ հինգական սենեակներով, խոհանոց, մատան և այլ կարևոր բաժիններ: Ունէր նաև իր յատուկ բժիշկը:

Գաղափար մը տալու համար այս թուականներուն և Հաճի Հայրապետի միջոցաւորութեան օրով Հիւանդանոցի մատակարարութեան եղանակին, հասոյթներուն, ծախուց, ուտեստի տեսակներուն և այլնի վրայ, նոյնութեամբ կ'օրինակենք հոս նոյնինքն յիշեալ միջոցներովի ձեռքով գրուած մէկ երկու հաշուեցոյցներ:

1819 Մարտի մէկ Քարախիս հիւանդանոցիս իրասկերից ընկալեալս

Խանութներէ, սուներէ, իւզհաճէյէն, խանէ, պարտէղէ	3291 20	}	3548 20
Բաժին ունեցող սուներէ	257		
Ի մէջ եկեղեցւոյ հանապազօր շրջեալ թաւախէ	371 8	}	744 22
Արտաբոյ եկեղեցւոյ հինգ տեղ եղեալ գանձանակէ	373 14		
Ի հարսանիս եղեալ թաւախէ 184 20. Յէրէրներու քիբոյ	37 25		222 5
Մշտնջենաւոր տարիք			484 18
Մասունքէ և մօմէ			989 13
Քանի մը հանգուցեալց կուակ. են և այլք որոց գործոյն ձեռնարկմամբ ընկալեալ			1228 29
Ետմուր Օղլուի մայրն բերն և խոստան տալ			500
Անցեալ տարուան միւթէլէլի Մարեան Պարոն Չագարն ետ հիսապէ յաւելեալն			291 4
Գարձեալ մօմէ և մասունքէ յաւելեալն ետ			410 10
Նոր հիւսապին գրեցի			255 26
			<u>8674 34</u>

1819 Մարտի մեկին վերջ Փետրվարի առաւելաչ
խարձագնացութիւնս յայտնիս

Յոտապի Մինասի ձեռամբ կերակրոյ առեւալս	1820 37	} 4691 7
Չեռամբս տուեալ կերակրոյ և սյւլ իրաց	2870 10	
Լաթեղէն իրաց տուեալս		} 379 20
Նոր քիւլէր մի շինեցի ի մէջ հիւանդատան և սյւլ		
տեղաց թամիր	1773 30	} 2232
Քիւրքճի Մհոթի Աւետիսի խնուրթին թամիր	458 10	
Հէքիմին տարելիք		} 425
Իճարէից և խառածի		
Միւհսիւր պաշտի բանտին խորճ		} 652
		} 295 7
ձեռ լրաց		} 8614 34

1820 Մարտի մեկին մինչ ցվերջ Փետրվարի խարձագնացութիւնս
հիւանդատանս յայտնիս

48 շաբաթման ձեռաց եղեւլ խորճ թեկերէններով և քէօմիւր		} 4284 36
	240	
14 քիւլէ պրիշձ		} 72 10
82 1/2 հիւյ. գէյթիւն իւշ		
154 » սուսամ իւշ		} 510 15
20 1/2 » արդարիւշ		
26 » զսյՖէ		} 65 25
Արեւ 472 հիւյ. 12 փարայէն		
103 հիւյ. չամիչ		} 180 39
21 » 300 տիրճէմ պանիր		
Բագլա, Նոխուր, Լպիտ, Թարխանա, պուլգուր		} 441 36
Քիշէ 9 1/2 հիւյ.		
չէքէր 10 »		} 40
պեպէր երկու հիւյ.		
Աշ, սոխ և երեկ հաւ		} 45 22
Փրէնկի չսյ		
Կաղանդին եէմիշ և պաղշիշ		} 47 20
Յօրէն քիւլէ 40, համալխով		
Չարխայիճի և տէյիքմէնճի	400	} 6 30
	20 5	
սոպան 12 հիւյ.		} 29 32
Սիւքիաս սպասաւորին ինն ամսվան աշխատանաց		
Սիմէճին վեց ամսվան	137	} 7 10
Թուրքանտա կնոջ	50	
Յովակիմ և կնոջ Սէնիմէր անուանեալին եօթ ամսվան	100	} 14 20
Վանցի մճատի. Յովհաննէսի 4 1/2 ամսվան	145 31	
	75 07	} 507 38

Թե՛ այս և թէ ուրիշ հաշիւներէ կ'հասկցուի թէ հիւանդանոցի այն աստնուան հասոյթի ազրիւրները եղած են տուններէ անուած վարձք — կ'յիշուի 12 տուն որոնց տարեկան վարձքը ամենէն բարձր 300 դրուշ, իսկ նուազագոյնը 130 դրուշ եղած է —, եկեղեցիի մէջ ամեն օր շրջած պնակներ, տարեկան բաժին ունեցող տուններէ զանձուած զրամ — կ'երևի թէ այս տունները իրենց կարողութեան չափով և գուցէ պարտաւորիչ սուրբ մը կուտան եղեր՝ 50 դրուշէ մինչև 1 դրուշ — եկեղեցիէ զուրս Հիւանդանոցի համար հինգ տեղեր դրուած գանձանակներ — այս հինգ տեղերն էին Պազըր պէտէսթէն, Հին պէտէսթէն, Գույումի չարշը, Շահին խան և Պասմախանէ — հարսնիք պատահած տուներու մէջ Հիւանդանոցի համար շրջած պնակներ, ֆէնէրներէ վարձք, (հարսանեաց տէրը վարձու կ'առնէր լապտերը մէկ դիշերի համար), մասունք և մամ, մշանջնատոր տարելիք՝ հանգուցեալ անձերու կողմէ կտակուած, պատահական նուէրներ ևն . .

Այս առաջին շրջանի միջոցին պատահած երկու ժանտախաններու թուականին (1812 և 1837) Հիւանդանոցի մէկ մասը ծառայած է իբր պատուարան ժանտախտաորներու, ինչպէս նաև 1843 թ մեծ հրդեհին ժամանակ իբր առժամեայ բնակարան կարօտ հրկիզեալներու: Ա. Արշաղոյս սասկէս կ'գրէ այս մասին. «Քաղաքիս ձմեռանոցը, և Յունաց ու Հայոց ժանտախտի համար եղած հիւանդանոցները բացին որպէս զի թէ՛ յոյն, թէ՛ իսլամ և թէ՛ հրէայ տեղ չունեցողները հիմակուհիմայ երթան բնակին հսն ուր տեղ կերակուր ալ կուտան»:

Կ'թուի թէ մինչև 1820 Իզմիրի հայ աղջիկները զուրկ մնացած էին նոյն իսկ նախնական կրթութեան մը բարիքներէն և լոկ բարեպաշտութիւն և համեստութիւն էր իրենց զարդը, իսկ մտքի մշակման և դաստիարակութեան կարևորութիւնը իսպառ անտես մնացած էր. հազիւ բանի մը ուսումնասէր ծնողներ իրենց աղջիկ զաւակները կ'ըրկէին տաներէցին կամ կարգալ զրել գիացող մէկու մը տունը՝ հասարակ ընթերցում և դիր սորվելու համար: 1820 ին վերջ կը գանէ հայ իգական սեռին կրթութեան մասին տիրող այս անտար-

քերականութիւնը, ծնայր կ'սթափին իրենց թմբութենէն և մանաւանդ զիրենք շրջապատող օտար հասարակութեանց օրինակէն զրգուած՝ կ'զիմեն այն ատենի ազգային վարչներուն՝ խնդրելով որ Հիւանդանոցի սենեակներէն մին յատկացուի իրենց աղջկանց իրրև զպրատուն. կ'ընդունուի այս օրինաւոր և զովելի փափազը և ջահանայի մը հսկողութեան ներքև զրել կարգաւ կ'ստրվին հայ աղջիկները: Հիւանդանոցի մէկ մասը այսպէս իբր զպրոց կ'ծառայէ 1820 Էն մինչև գրեթէ 1830 կամ 1835 որ միջոցին Վիեննաբնակ Իզմիրցի վաճառական Յակոբ Սարգսեան իր անձնական ծախքով ազգային գեանի վրայ կառուցանել կուտայ աղջկանց զպրոց մը միայակ որ իբր անուամբ կ'հոչուի Սարգսեան վարժարան:

ԵՐԵՎԱՆԻ ԶԲՁՄՆ

1842 — 1879

1801 ի շինութենէն յետոյ թէև մերթ ընդ մերթ և ի պահանջել հարկին կ'կատարուին մասնակի նորոգութիւններ և կարևոր յաւելումներ կ'ըլլան Հիւանդանոցի ինչ ինչ մասերուն վրայ, սակայն 42 — 79 տարիներու երկար շրջանի մը մէջ նախկին շէնքը հետզհետէ կ'հիննայ կ'ըսոյբայի, միւս կողմէ պէտքերը կ'բազմահատկին, ժամանակի պահանջները կ'փոխուին ու զգալի կ'ընեն աւելի ընդարձակ և աւելի ողջպահիկ պայմաններու համեմատ կազմակերպուած Հիւանդանոցի մը վերաշինութեան պէտքը: Ահա այս երկրորդ վերաշինութեան կ'ձեռնարկուի 1842 ին Մատթէոս այս երկրորդ վերաշինութեան կ'ձեռնարկուի 1842 ին Մատթէոս այս երկրորդ վերաշինութեան օրով, թէև Եպիսկոպոսի (յետոյ կամոզիկոս) առաջնորդութեան օրով, թէև ո՛չ շատ զխրութեամբ. ժողովրդական հանդանակութիւնը զանդապ ու զժուարձաւ յատաջ կ'երթայ, անտարբեր ու զժկամակ անձեր և շն ուզեր որ և է կերկ'հակառակին վերաշինութեան գործին և շն ուզեր որ և է կերկ'սով մասնակցել մարդասիրական այս հաստատութիւնը աւելի պայծառ և աւելի պատուաբեր զիրքի մը վերածելու համար եղած ընդհանուր ջանքերուն և նուիրատուութեանց: Բայց ժողո-

վրդեան բարեակր և լրջամիտ մասը աւելի քան կրրէք անհրաժեշտ պէտք կ'տեսնէ Հայ հասարակութեան պատիւ բերող շէնքով մը օժտելու ազգը և մեծամեծ զոհողութեանց զնով կ'յաջողի զուրս հանել հին խարխուղ Հիւանդանոցի վերաշինութիւնը: Այս վերաշինութեամբ, որու զլուխ և սատար կը կանգնի Էրեւանոց Մահտեսի Պարոն Աւետիք Հայրապետեան, Հիւանդանոցին մէջ կ'աւելցուին հինին վրայ 10 սենեակ, բաղնիք մը, ունկնդրութեան սրահ մը և ծերանոց մը (վերջին երկուքը պարտէզին մէջ), ծախիւք ազգային անտուկին ու ժողովրդական հանդանակութեամբ:

Այս միենայն թուականին կ'անուի նաև Հիւանդանոցին մէջ մատուռ մը շինելու ֆերմանը, սրովհետև, ինչպէս ըսինք արդէն, մինչև այն ատեն Հիւանդանոցին մէջ կրօնական պաշտամունք կատարել արգիլուած էր և միայն Ս. Լուսաւորչի պատկերը և մատուռը կային հոն որոնց ուխտի կ'երթար ժողովուրդը և մամ կ'վառէր: Հիւանդանոցի բահանան, (հաւանաբար այն սր Ս. Լուսաւորչի մասունքին պահպանութիւնը և հսկողութիւնը կ'ընէր) Պօլսոյ Պատրիարքին միջոցաւ կ'զիմէ աւերութեան և կ'խնդրէ մատուտի մը շինութեան արածութիւնը, յայտնելով թէ Հիւանդանոցը եկեղեցիէն հետո ըլլալուն՝ զիշեր ատեն ծնած երախաները մկրտելու, պատարագ մատուցանելու, հիւանդներուն և մեռեալներու վրայ Աւետարան կարդալու մասին մեծամեծ զժուարութիւնը միշտ անպակաս են: Խնդրուած ֆերմանը կ'անուի այն ժամանակուան Ստեփաննոս Պատրիարքի ձեռամբ և կ'զրկուի Իզմիր, որմէ 7 օր յետոյ Պօլսէն Միքայէլ Ա. Միրա (հաւանաբար Փիլիշեան) յատուկ և սիրուն ոճով նամակ մը կ'զրէ Իզմիրի կառավարչին, խնդրելով որ չի զլանայ իր աջակցութիւնը մատուտի շինութեան և ֆերմանի գործադրութեան համար զխրութիւններ տայ:

Արդէն 1801 ի առաջին վերաշինութենէն մէկ երկու տարի ետքը (1218 թէպի—Իւլ—տիւրը 15) Բաբերդցի Վիշիշք կոչեցեալ Յովհաննէս Պատրիարք Չամաշքըճեանի միջոցաւ Հիւանդանոցի շրջափակին մէջ մեռել թաղելու հրովարտակ ելած էր:

Մատուտը շինուելէ և օժուելէ յետոյ հոն կ'փոխադրուին Հիւ-

Եանդանոցի սրահէն Ս. Էռեսաւորչի պատկերը և մասունքը ու այս նուէնտե անխափան և կանոնաւորապէս կ'կատարուին ժամերգութիւն և կրօնական պաշտամունք: Այս շինութեան յիշատակարանը արձանագրուած է մատուռի աւագ դրան ճակատը մարմարեայ քարի մը վրայ, այսպէս.

« Կառուցուցաւ Եկեղեցիս Սրբոյն Գրեգորի Լուսաւորչին արդեամբք համայն Ժողովրդոցս ազգիս յԱռաջնորդութեան Տ. Մատթէոսի Արքեպիսկոպոսի 1842 »

1842 Գեկտ. 13 ի կիրակի օրը Առաջնորդ Մատթէոս Արքեպիսկոպոս՝ ի ներկայութեան կղերական դասին և ժողովրդեան խորըն բաղմունքեան՝ մեծահանգէս շքով կ'կատարէ մատուռի օծման արարողութիւնը, սրտառուջ ապաւորութիւն կ'ընդունէ ներկայից վրայ կրօնական այս հանգէսը և ամեն ոք կ'զգածուի ու կ'մխիթարուի սեաներով մարմնոյ արտաքին զարմանատան մաս կառուցուած նաև տառապեալ հողիներու սխափարանը և հոգւոյ հիւանդութեանց բուժարանը:

Ահաւասիկ թէ ի՞նչ կ'զրէ Ա. Արշալոյս այս երկրորդ վերաշինութեան և մատրան օծման հանդէսին նկատմամբ.

« Ծառանցմէ Իզմիրի Հայոց Հիւանդանոցը հինցած բլլալով, Հայազգի բարեպաշտան անձինքներու ջանքովը ու անոնց առատաձեռն արդիւնքովն քանի մը ամիսէն ի վեր կ'շինուի և գրեթէ բուլլարովն նորոգուեցաւ, որուն մէջ պզտիկ ու աղւտր բարաշէն եկեղեցի մըն ալ շինուեցաւ յանուն Ս. Գրեգոր Լուսաւորչի, ու ամէն բան արդէն լմնցած բլլալով, անցած կիրակի (1842 Գեկ. 13) Գեռ. Մատթէոս Ս. Արքեպիսկոպոս յիշեալ եկեղեցիին օծումը բրաւ մեծ հանդէսով քահանայից և ժողովրդոց սրտնց շերմեանդութիւնը և սղորմութեան յոժարակամ նուէրնին, տարբերովն հասարակաց ախակարութեան էզէլի բլլալով, գովութեան և յիշատակութեան արժանի կ'համարինք: Կ'աղաչենք նաև որ Իզմիր զանուոյ Մեծ Հայազգի սեղանաւորներ բարեհաճին մեր մտերիմ շնորհակալութիւնը ընդունիլ իրենց մարդասիրական վարմունքին համար ի նըպաստ Հիւանդանոցին: Իզմիրի Հայոց ժողովուրդը անշուշտ կ'պարտաւորի երախտագէտ բլլալ Հիւանդանոցին վերակացու Էբեղեան



մահտեսի Պարոն Աւետիք (Չարդապետեան) աղային ստղծակալ աշխատանալը և բարեսէր յորդանանցեանց արհեստագործ շինութեանց տեղեկութիւն ունենալով, յոժարեց յանձնառու եղաւ առ Հիւանդանոցին և եկեղեցիին կառուցմանը ու կրնանք հաստատել թէ ինքը բարի պատճառ եղաւ առ սուրբ շինութեանը որուն համար բոլոր բարեպաշտ հասարակութիւնը խիստ զոհ ու երախտագէտ է:» (Ա. Արշալոյս). օրագիր, 1843. քիւ 117

1842 Էն մինչև 1861 զանուած բոսն տարուան ժամանակա միջոցին մէջ Հիւանդանոցը մերթ փոյլուն և մերթ անկեալ ու ակուր վիճակներ կ'ունենայ: 1843 ի մեծ հրդեհէն յետոյ, երբ Եկեղեցի ու Առաջնորդարան հրոյ ճարակ կ'ըլլան, Հիւանդանոցը առ ժամանակ մը կ'ժտուայէ նաև իբր կեդրոն վարչական գործառնութեանց: Հակառակ ժամանակի մատաւորութեան՝ որչափ որ ստոյգ տեղեկութիւններ կ'պակսին այլ երկար շրջանին մէջ Հիւանդանոցի մատակարարութեան և ներքին վիճակին վրայ, կրնանք ստիպան ենթադրել թէ ամեն տնդամ որ ժողովրդական նպաստները առատ և մատակարարութեան ղեկը խնայոյ և անտեսադէտ ձեռքերու մէջ զանուած է, Հիւանդանոցն ալ նախանձեղի և գոհացուցիչ կացութիւն մը ունեցած և լիւզի կատարած է մարդասիրութեան պահանջները, հեռզհեռ իր վրայ հրաւիրելով ազգին ամեն մասերուն՝ մինչև իսկ անտարբերներուն՝ ուշադրութիւնը և հոգածութիւնը:

Յաւալէ է որ Ա. Արշալոյսի այս թուականներուն համապատասխանող թիւերուն մէջ ո՛ր և է ակնարկութիւն կամ ծանօթութիւն չենք գտնիր ազգին այս կարեւոր հաստատութեան վրայ, բացի մի բանի ազգայնոց անսունքերէ որոնք իբր տեսուչ կամ հոգարար ձու իրենց կարողութեան և հասկացողութեան չափով մատակարարած են Հիւանդանոցին պէտքերը: Այսպէս 1843 ին Հիւանդանոցի հոգարարձու եղած է Աւետիք Էբեղեան, Ժանտախաի հիւանդանոցին՝ Ստեփան Պաշտիգպանեան, 1846 ին՝ Պաշանայր Մահտեսի Կարապետ Սիլիսիսարեան, Յովհաննէս Գուշատալեան, 1847 ին Ստեփան Եահվէրիլեան, 1848 ին Սարգիս Սուրբառեան և երկու թագործ Մահտեսի Թաշուր աղա, 1851 ին՝ Սարգիս Տէմիրպաշեան, ևն:

Իսկ 1861 Էն սուղին երբ Իզմիրի ազդայնոց մէջ գրական ոգին կ'արթննայ տակաւ և զանազան պարբերական թերթեր կ'հրատարակուին, թէև կարճատև կեանքով, լրագրութիւնը տեսակ մը ծանաղորդայր կ'դառնայ թեր ու դէմ կարծիքներու Հիւանդանոցի նկատմամբ, զովեստ և պարտաւ հաւասարակէս կ'յայտնուին հրատարակաւ, քննադատութիւն և գնահատում՝ վարիչ հոգաբարձուններու և տեսուչներու դէմ կամ ի նպաստ՝ ազատօրէն երևան կու գան, և այսպէս հասարակութիւնը աւելի ևս կ'հետաքրքրուի Հիւանդանոցի գործերով, անոր բարեկարգութեան ու պայծառութեան մասին իր եռանդը ու ջանքերը կ'կրկնապատկին և նպաստի համար քսակներու բերանները աւելի լայն կ'բացուին:

Այսպէս Միտքիւն Հաշտեկից հանդէսին 1861 ի Բ. տարւոյ թիւ 2 ին մէջ կ'պատահինք հետեւեալ հատուածին.

« Խօսքերնիս Ազգ. Հիւանդանոցներուն վրայ ըլլալով, մասնաւորաբար Իզմիրի Հիւանդանոցին, չենք կրնար առանց շնորհակալու զգացումնիս յայտնելու անոր բարեկարգութեան և մաքրութեանը վրայ խօսիլ. այս շնորհակալութիւննիս ազգովին է, որովհետև ամեն բերնէ գովութիւններ և օրհններն կ'լսենք, և ամեն բերան գոհ և երախտապարտ սրտով կ'արտասանէ անոր ներկայ արժանընտիր վերատեսուչը, որոյ առջև ամեն աշխատութիւն, ինամբ և հոգացողութիւն բան մի չեն երևար, և նոյնիսկ իւր զբաղեալ ժամանակը կը զոհէ անոր մաքրութեան և բարեկարգութեան համար, ինչպէս և իւր աշխատաւոր նախօրը: Այս անձն է Տէմիրալաշեան տոհմաւէր Սարգիս աղայն, Քաղ. Ժողովոյ անդամներէն մէկը և հիւանդանոցի բարեկարգութեան վերականգնողը, Տնտեսական Խորհրդոյ մեծարգոյ անդամաց գործակցութեամբ, որը արժանաւորապէս կարգած են իրենց կողմանէ յիշեալ ազգայինը իրր վերատեսուչ Զմիւռնիոյ Հիւանդանոցին: Հիւանդանոցին մէջ ընդամենը 80 հոգւոյ չափ կ'ինամուսին ամենայն կերպիւ. ասոնցմէ 1/4 ք հիւանդ են, բայց հինգ վեցը միայն անկողնոյ մէջ, և միւսները գրեթէ առողջացած և յուս գալու վրայ: Ասանց զգուշութիւնները և կարգադրութիւնները խիստ կանոնաւոր են վերոյիշեալ Սարգիս աղայն շնորհիւ, որ նոյնիսկ զեղբրը իւր ձեռքով կը կարգադրէ և հիւանդներուն համար որոշուած ժամերը կը հսկէ. . . »

Ազգային վարչական գրութեան փոփոխութեամբ արդէն վաղուց զարդած էր միշտեվէլիական պաշտօնավարութիւնը և 1847 Էն ետքը վարչային նոր կազմակերպութեան համեմատ՝ Գեորգոյն Ժողովոյ կողմէ կ'ընտրուէին եկեղեցւոյ, վարժարանի, Հիւանդանոցի և այլ Ազգ. հաստատութեանց Հոգաբարձուս կոչուած գործող և վարիչ մարմինները՝ օրինաւոր համարատուութեամբ: Անհաւանական չէ ուրեմն ենթադրել որ Իզմիրի Հիւանդանոցն ևս այդ թուականներէն սկսեալ ունեցաւ իր յաջորդական հոգաբարձութիւնները: Իսկ 1860—1861 Էն սուղին, երբ սահմանադրական և հակասահմանադրական կուսակցութիւններ ծնունդ կ'առնեն և անոնց պայքարները արձագանք կ'գտնեն լրագրութեան մէջ, սկիզբ կ'ըլլայ Սահմանադրական հոգաբարձութեանց կազմութեան՝ ձեռամբ Քաղ. Ժողովոյ. կ'ցաւինք որ այս սահմանադրական հոգաբարձութեանց պաշտօնավարութեան կամ մատակարարութեան մասին ևս կ'պակասին ստույգ ծանօթութիւններ և արձանագրութիւններ՝ մինչև 1879 և բիչ մըն ալ աւելի սուղին:

1861 տարին նշանակելի և աւետարեր թուական մը կ'ըլլայ Իզմիրի Հիւանդանոցին համար, որովհետև այս տարւոյն մէջ է որ առաջին անգամ ըլլալով տեղի կ'ունենայ Տիկիներու ինամակալութեան կազմութիւնը՝ որ սկիզբէն շրջան մը կ'ընայ այս մարդասիրական յարկին համար:

Հոս կ'ամփոփենք Ծաղիկ տասնօրեայ հանդէսին 1861 Յուլիս 10 և թիւ 2 համարին մէջ առաջին ինամակալութիւններու կազմութեան նկատմամբ հրատարակուած հետեւեալ կրճատ ու թերի ծանօթութիւնները:

« Տնտեսական խորհրդին և իր կազմած Հիւանդանոցին Հոգաբարձութեան ուշադրութիւնը կը հրաւիրենք այս հաստատութեան վրայ. վասնզի կը լսենք թէ մեծ բարեկարգութեան և ինամատարութեան կարօտ է այն: Ինչպէս Կ. Պօլսի մէջ արդէն հաստատուած է, Իզմիրի մէջ ալ եթէ ինամակալ տիկիներու ընկերութիւն մը կազմուելու ըլլար Հիւանդանոցի տառապեալները ինամեղու համար, անշուշտ առաքինութեան և անձնուիրութեան նոր օրինակ մը

ևս սկիտի ունենան ազգային թերթերը և իրենց էջերը սկիտի գար-
գարեն անույ:»

Գարձեալ նոյն հանդէսին 1861 Օգոս. 1 ի չորրորդ թուոյն մէջ.

«Ուրախութեամբ սրտի կը ծանուցանեմ Ձեզ, թէ այդ Ձեր
գովելի փափաքը՝ բաղաբիս երեկելի գերդաստաններուն բանի մը
տիկնանց սրտին մէջ յղացած է, և յոյժ հաւանական է՝ թէ այդ-
սկիտի Հոգաբարձու ընկերութիւններ քիչ ժամանակէն ետքը ծնին ու
երեւան ելլեն ի ցնծութիւն ընդհանուր մարչասէր սրտերդ...: Որչափ
որ անտեսականը իր սրտորը ըստ արձանուոյն կատարէ Հիւանդա-
նոցի մասին, գարձեալ ներքին անտեսական գործերուն մէջ սէտք
ունի անձնուէր տանտիկիններու: Անկարելի է որ մաքրութեան և
ուտելեաց վերաբերեալ բաներուն մէջ առանց անտեսողէս կանանց
գործակցութեանը կատարեալ բարեկարգութիւն պահուի հոն...»:»

Այս առիթը, զորս կ'գրէ նախակաշիւր մը, ընտանեկան համա-
խմբումի մը մէջ տիկիններու ներկայութեան բացուած խօսակցու-
թեան մը ամիսփումն են և նոյն պահուն իսկ իրենց յղացած գաղա-
փարին մարմնացում տալով ներկայ տիկինները 30ի չափ անուններ
կ'նշանակեն և կ'յղեն Տնտեսական Խորհրդին որ նոյն ցանկին մէջն
բուէարկութեամբ տիկիններու Հոգաբարձութիւն մը կը կազմէ Հիւան-
դանոցին համար, ինչպէս նաև Ուսումն. Խորհուրդը՝ աղջկանց վար-
ժարանին համար: Գծարարար անձանքի կ'մնան մեզ այս առաջին
խնամակալուհի տիկիններու անունները՝ արձանագրելու համար
իրենց յիշատակին նուիրուած այս բանի մը տողերուն մէջ:

Սակայն Ազգ. Հիւանդանոցի ո'չ ընդարձակութիւնը և ո'չ եկա-
մուտները կրնան բաւարարութիւն տալ յարաճուն պէտքերուն և հոն
պատասպարուող հիւանդաց թիւը միշտ սահմանափակ բանակութեան
մէջ պահելու հարկը կ'ծանրանայ եկող գացող Հոգաբարձութեանց
վրայ, մինչդեռ Հիւանդանոցէ դուրս բժշկական ինժամաց և զարմանի
կարօտ չըսուող հիւանդներու թիւը օրէ օր կ'աւելնայ և անոնց մար-
դասիրական ձեռք մը կարկառելու կարեւորութիւնը կ'շեշտուի և ան-
հրաժեշտ կ'ըստնայ: Ահա այս պէտքին գոհացում տալու բարեսիրա-
կան ձեռնարկին զուելս կ'անցնին խումբ մը աղջկանցիկ և զթասէր աղ-
ջայններ և 1862 Մայիս 1 ին կ'ընեն նոր ընկերութեան մը հիմք

Աղքատասիրաց անուամբ, նպատակ ունենալով կարօտ և չըսուող
ընտանիքներու, մանաւանդ թաքուն աղքատներու օգնութեան ձեռք
կարկառել, հիւանդութեանց ժամանակ ձրի բժիշկ և զեղ մատակա-
րարել՝ տաներէց բահանային յանձնարարութեամբ և խնդրանք:

Ահաւասիկ թէ ինչ կ'գրէ Աղքատասիրաց ընկերութեան մասին
Միտքիւն հանդէսը 1862 թիւ 16 հրատարակմէջ.

«Աղքատասիրաց ընկերութեան զլիւսուող նպատակը, որ սկիտի
ըլլայ ազգային հիւանդանոցէ դուրս գտնուող անկար և աղքատ հիւ-
անդները ինժամել, ըստ կարի մասնաւոր բժիշկ և բահանայ սահ-
մանելով, իսկա հաճոյ թուեցաւ նաև բաղաբիս Սրբազան Առաջ-
նորդին (Թագութեան Պօզոս), որ կրօնական յոգով գումարելով
տուաւ նոյն ընկերութեան երկու բահանայ որ ընկերութենէ առա-
ջարկուած էր, որոնք են արձանագատիւ Տէր Յովհաննէս Չիլիճեան
և Տէր Ստեփան Ալիւճեան քահանաները. Ընկերութեան յատկաց-
եալ բժիշկն է բաղաբացուցմէ լաւ ճանչցուած և իր արհեստին մէջ
յաջողակ Տօբթոր Միլիթաթին: Ընկերութեան հիմնադիր անդամներն
են, Ստեփան Չիլիկ, Գալուստ Ալիման, Գրիգոր Մ. Յ. Եսայեան,
Սարգիս Չիլիկեանց, Քօչոս Պերկամալեան, (գանձապետ) Սարգիս
Մ. Վանանդեցի (ատենադպիր) Պ. Յարութիւն Փափազեան, Պօ-
զոս Կ. Տիլպլեան, Ս. Աւետիքեան, Յակոբ Մարկոսեան »:

Մեծ համակրութեամբ և ընդունելութեամբ կ'ողջունուի նորա-
կազմ բարեգործական ընկերութեան երեւումը ամեն դասակարգի
ազգայիններէ և իր բարի ու գովելի նպատակը արձագանգ կ'գտնէ
ամեն մարչասէր սիրտերու մէջ, անդամներու թիւը օր ըստ օրէ կը
բազմանայ, նուէրներով և բաժանորդարութեամբ պատկառելի դրա-
մաղլի մը սէր կ'ըլլայ ընկերութիւնը և իր գոյութիւնը կ'ապահով-
ուի մինչև 1894:

Աղքատասիրաց Ընկերութիւնը իր կազմութենէն զրէթէ երեք
տարի վերջը, 1865 ին, մտաէն վերահասու ըլլալով Ազգ. Հիւան-
դանոցի սղորմիլի վիճակին, հակառակ իր նպատակին բացորոշ
արամադրութեան, ինքնաբերաբար կ'առաջարկէ այն ժամանա-
կուան Քաղ. յոգովին ստանձնել Հիւանդանոցի Հոգաբարձութեան
պաշտօնը և հոն պատասպարուածներու ցաւազին վիճակին անմիջա-

կան դարման մը տանիլ: Այն նամակէն՝ սրով այս առաջարկը կը մատուցուի Ազգ. Վարչութեան, կ'ըսողներ ինչ ինչ պարբերութիւններ որոնք յատկօրէն կ'ստակերացնեն այլ թուականին Ազգ. Հիւանդանոցի ճշգրիտ կացութիւնը:

« . . . Մեր նամակի նպատակին գալով՝ որ բարեպաշտական առաջարկութիւն մի ընել է Հիւանդանոցի վերաբերեալ, ամենին աներկմիտ ենք որ ընդունելի պիտի թուի ազգօրուտ Խորհրդէյ, որ թերևս իր գրադմանց առաւելութիւնէն ժամանակ չէր ունենար անոր ստոյգ վիճակին ակնաստես և բարուր մատակարարութեան գործադիր հանդիսանալ ըստ պահանջման: Ստորագրեալքս որ փորձառու լինելով նորա խղճալի կացութեան՝ միամտաբար և սոսկապէս բարեպաշտական պարտք մը կատարելու համար, նոյնպէս և Սահմանադրական Խորհրդոյ նպատակին յարմար և բոլորովին անհրաժեշտ ծառայութիւն մի ընելու նպատակաւ՝ ժողովեցանք Հիւանդանոցի ներկայ ցաւալի կացութեան անմիջապէս դարման մի տանելու միջոց մի լինել . . . : Բնական է հաւատալ որ երբ հիւանդ մի Ազգ. Հիւանդանոցի մէջ կը մտնէ՝ իւր յոյսը առողջանալն և պէտք եղածին չափ հանդիսաւ լինիլն է, այլ մեր հիւանդներու սրտին ամենէ մեծ սոսկումը հիւանդանոցի մէջ խնամուիլն է, և այս մի միայն մեր Ազգին յատկացեալ . . . վասն զի հիւանդի մը առողջութեան (թո՛ղ թէ առողջին) զլիաւոր պայմաններէն մէկն մաքրութիւնը և բարուր մատակարարութիւնն է. անաչառապէս խօսելով մեր Հիւանդանոցի մէջ այս պայմանը ծայրէ ի ծայր կը պակսի, ազտեղութիւնը առողջ մը հիւանդացնելու չափ յառաջ գացած, հարկաւոր եղած պիտոյքները բոլորովին զլացեալ, և հիւանդներու խղճալի և աստիճանեալ կացութիւնը մեր սրտերը յանապիս վշտացուցին: Մենք որ ակնաստես և փորձառու եղանք այս ամենուն՝ ազգային պատույ նախանձախնդրութիւնը չը թողուր մեզ աւելի մանրամասն բացատրել, իբր այն զի՝ չենն օտարները անդամ ըսնն այսպիսի անխնամ Հիւանդանոց մի . . . :

« Արդ, այսպիսի թշուառ կացութիւն մի մեր սրտերը ու խիղճը շարժելով կը համարձակինք ամեն զոհողութեան յանձնառու լինելով՝ այսպիսի հոգէ մը Խորհուրդ ինսպել, և Հիւանդանոցի մատա-

կարարութիւնն ըստ ամենայն մասին մեզ յանձնելն ինչպէս, այժմէն հաւատարմով որ մեր կողմէ պէտք եղած անձանձէր աշխատութիւնը պիտի շինայնք, անոր թէ՛ մաքրութեան և թէ՛ ներքին մատակարարութեան համար, և ամեն ամիս պէտք եղած ծախուց գումարը մարդասիրտբար հայթայթելով ազգօրուտ Խորհուրդէյ, նոյնպէս և ամեն ամիս ստորագրեալքս պարտաւոր պիտի ճանչնանք զմեզ հաշիւ ներկայացունել Ժողովոյդ »:

Այսպէս 1885 Ապրիլ 1 ին պաշտօնապէս Հիւանդանոցի մատակարարութիւնը կ'յանձնուի Ս: քառասիրաց Ընկերութեան որ մեծ եւանդով ու անձնուիրութեամբ կ'վարէ իր պաշտօնը շատ աննպատակ պարագաներու մէջ, մասամբ կ'բաժնայ զժողովեան պատճառները և կ'վայելէ պաշտօնական մարմնոյն և հասարակութեան համարումը: Սակայն անակնունելի վիստածներ ծախուց գումարք կ'կրկնապատկեն, Հիւանդանոցի սենեակները անբուական կուլան պատուարելու բոլորայ (որ այս միջոցին կ'ճարակեր) վարակուած և ուրիշ կարգի հիւանդները, բոլոր սենեակները, Հոգաբարձութեան ժողովաւեղին, սրահները հիւանդներով կ'լեցունին, այնպէս որ հարկ կ'ըլլայ շէնքէն դուրս Հիւանդանոցի շրջափակին մէջ մնացեալներու համար բնակարան հայթայթել և կարելի եղածին չափ զանոնք պատուարել: Այս արտակարգ ծախուց տակուռ համար ընկերութիւնը քանիցս կ'զիմէ ժողովուրդի օճանդակութեան, սակայն ի զերե կ'նկնեն իր ջանքերը և կ'ստիպուի իր անձնական բուսկէն նպատակ և մինչև աստիճան մը նուազեցնել պարտքերը որ 300 լիւրայ կը հասնէին:

Ընկերութիւնը գոյթ ի գոյթ շարունակելով հանդերձ իր պաշտօնը՝ քանիցս պաշտօնական նամակներով Քաղ. Ժողովին կ'ինսպել իր պահանջքն անյապաղ վճարումը և Հիւանդանոցի ծախուց համար կարևոր եղած գումարին կանոնաւոր վճարումը Ազգ. սնտուկէն, մի և նոյն ժամանակ մասնանիշ ընելով Հիւանդանոցի շէնքին վրայ քանի մը առողջարար սենեակներու յաւելման անհրաժեշտ պէտքը: Սակայն ապարդին կ'մնան այս ամեն զլմումները, մ'ուկալմէ հասարակութեան անտարբերութիւնը կ'աւելնայ, նպատակ և նուէր կ'ուսազին, պարտքերը կ'աճին և թշուառութիւնը կ'ճանրանայ Ազգին ամս վրայ: Իրաց այս ցաւալի կացութեան հետևանքը

այն կ'ըլլայ որ Աղբատասիրաց Ընկերութիւնը՝ երկու տարիի շափ
ողի ի բոլին-աշխատելէ և յուսահատ մաքառելէ յետոյ՝ տեղի կու-
տայ և 1867 Մարտ ամսուն մէջ կ'հրատարի Հիւանդանոցի մա-
տակարարութեան փշաղից և դժուարատար պաշտօնէն և կը շարու-
նակէ լրիկ և անշշուկ իր մարդասիրական գործը Հիւանդանոցէ
դուրս՝ մերթ եկնելով մերթ լինալով, բայց միշտ սփոփանք և երջան-
կութիւն սփռելով աղբատարի յարկերու մէջ, մինչև 1894 ուր հա-
կուտակ Ընկերութեան զիւցազնական ջանքերուն և իր գոյութիւնը
կառակ Ընկերութեան զիւցազնական ջանքերուն և իր գոյութիւնը
պահպանելու համար կատարած զոհողութեանց՝ վերջնապէս կ'ըլ-
ծուի շնորհիւ ազգայնոց անտարբերութեան և մանաւանդ մեծա-
տանց սանտարիութեան:

ՅԲԲՈՐԳ ԶԲՁԱՅ
1879 - 1901

1842 ի վերաշինութեանն մինչև 1867 և անտի մինչև 1877
Աղբ. Հիւանդանոցը կ'բոլորէ 33 տարուան երկար շրջան մը՝ աւել-
լի կամ նուազ արդիւնաւորութեամբ ծառայելով իր նպատակին իբր
զթատիրական հիմնարկութիւն մը, պատասպարելով և դարմանելով
հայ և օտար հիւանդներ և անկարներ՝ որչափ կ'ներէին իր եկամու-
տի աղբիւրները և ժողովրդական նպատաները: 1867 էն յետոյ,
երբ Աղբատասիրաց Ընկերութիւնը՝ յուսահատ վիճակի մէջ՝ ձեռք
կ'բռնէ Հիւանդանոցի ներքին մատակարարութեան պաշտօնէն, յոսի
շրջան մը կ'ունենայ այս մարդասիրական պատասպարանը՝ մէկ կող-
մէն անհնաւան մատակարարութեան մը և միւս կողմէն հատոյթնե-
րու նուազման և հասարակային անտարբերութեան շնորհիւ, լռե-
մերթ ընդ մերթ կ'երկին անձնուէր և բանիմաց հոգաբարձութիւններ
որ արտակարգ միջոցներով կ'ջանան կարելի եղածին չափ գոհա-
ցուցիչ վիճակի մը մէջ պահել զայն և փրկել Ազգին տան պատիւը
յաշս օտար հատարակութեանց: Իսկ Հիւանդանոցի ներթափան
շէնքը՝ արդէն ոչ այնչափ հատաբառուն՝ 33 տարուան միջոցին մէջ
թայեցայման վիճակի կ'հասնի, հիմնական նորոգութեան պէտքը ա-

մնոնն ուշադրութիւնը կ'գրաւ, ժամանակները կ'փոխուին, բազա-
քալրթութիւնը նոր պահանջներ կ'բերէ և սղջպահիկ պայմաններով
օժտուած ընդարձակ հիւանդանոցի մը կառուցումը անհրաժեշտ կը
դարձնէ, միևնոյն ժամանակ անաստական և այլ պատճառներով իդ-
միրի և շրջակայից հայ ընտելութիւնը օք օրի կ'ածի կ'բազմանայ՝
ներքին դատաներէ եկող նորանոր պանդուխտներով և Հիւանդանոցի
հին շէնքը անձուկ և անբաշտական կուգայ պատասպարելու համար
ամեն կողմէ զխնդ հիւանդներ և անկարներ:

Այս թուականին (1877) իդմիրի Առաջնորդ կ'ընտրուի Գեր.
Մելքիսեղեկ Վարդապետ Մուրատեանց որու խոհական և շրջա-
հայեաց ընթացքին և բարոյական ազդեցութեան շնորհիւ նոր զարկ
մը կ'ունեն տեղային վարչական գործերը՝ բարեկարգութեան շաւ-
ղին մէջ, ընդ որս և Աղբ. Հիւանդանոցը որու անկերպարան վի-
ճակը և նիւթական շէնքին հինցած, խարխուղ և առողջապահիկ պայ-
մաններէ զուրկ կացութիւնը վաղուց կը դրաւն ոչ միայն նորընտիր
Առաջնորդին այլ նաև իդմիրի հանրաժանութիւն և մեծահարուստ ազ-
գային վաճառականներէն Սպարթալեան Յակոբ և Յովհաննէս եղ-
բարց ուշադրութիւնը, սրտը իրենց բարեպաշտ և վեհանձն հոգւոյն
մէկ փափազը կատարելու համար Գեր. Առաջնորդին կ'ուղղեն հե-
տեկալ նամակը, որու մէջ ո'չ միայն ճշմարիտ մարդասիրութեան և
պարզասիրութեան ողին կ'փայլի, ինչպէս կ'գրէ Ա. Մաւուշ, այլ և
օրինասիրութիւն մը որ նուէրին յարը կ'բարձրացնէ:

Արժանապատիւ

Տ. Մելքիսեղեկ Վարդապետ Մուրատեանց
Նախագահ Բաղախական Ժողովոյ Վիճակիս

Արժանապատիւ Հայր,

Մեք ստորագրեալ երկուքին հարազատչա՝ փափաքելով ըստ
մերովսանն կարողութեան՝ ծառայութիւն մատուցանել մեր սի-
րելի Ազգին՝ եւ առայժմ նշմարելով մանաւանդ որ քաղաքիս
ազգային Հիւանդանոցին շէնքը հնացած եւ առողջապահիկ
պայմաններէ զուրկ վիճակի մէջ կ'գտնուի, խորհեցանք մեր

ծախքով եւ վերահասուածեամբ նախկին հիւանդանոցի տեղոյն եւ սեպհական գետնոյն վրայ նոր հիւանդանոց կառուցանել, եւ այս նպատակաւ յատուկ ճարտարապետի ձեռամբ գծագրել տուինք շինուելիք Հիւանդանոցի յատակագիծը:

Քայց որովհետեւ օրինաւորութիւնը կը պահանջէ նախ Պատկառելի Ժողովոյդ հաւանութիւնն ընդունել եւ ապա ձեռնարկել շինութեան, ուստի եւ մեր կը փութամբ ահա ներկայիւս մեր տոյն փափաքը յայտնելով հանդերձ՝ մատուցանել ընդ նմին նաեւ պատրաստուած յատակագիծը, յորմէ կարող էք տեսնել մտադրեալ շինութեան ղիրքը, սենեկաց քանակութիւնը եւ այլն: Առ այս եթէ հարկ տեսնուի մանրամասն բացատրութիւն (զոր չենք կարծեր) կարող է գոհացնել գՊատկառելի Ժողովը սիրելի հորեղբորդին մեր, Կարապետ աղա Ա. Սպարթալեան, որ մեր կողմէ գործակատար կարգուած է այս մասին: Քաջայոյս եմք, Արժանապատիւ Հայր, որ Պատկ. Ժողովը պատուական Տնտեսական Խորհրդոյ խորհրդածութիւնն եւս ընդունելէ զինի՝ կը փութայ յայտնել մեզ իւր բարեհաճ հաւանութիւնը, որպէսզի եւ մեր առանց ժամանակ կորուսանելու ձեռք չհասած՝ յաւարտ հասուցանելք յիշեալ շինութիւնն ի փառս մարդասիրին Աստուծոյ, ի կատարումն բարձրագոյն մերոց եւ ի սփոփանս ամենայն պատասպարելոցն ընդ յարկաւ նոյն պատասպարանին:

Անտարակոյս լինելով որ մեր տոյն առաջարկը քաջպետրութեան կ'արժանանայ Պատկ. Ժողովոյդ կողմէն, եւ հիւանդաց առժաւմանակեայ տեղափոխութեան մասին կը տնօրինուի ինչ որ կարելոյն է՝ ի ձեռն Պատուարժան Տնտեսական Խորհրդոյ, մնամք

23/4 Օգոստոս 1877 ՅԱՎՈՔ ԵՒ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՍՍՈՒՐՔԱՆԵԱՆ
Զմիւռնիա

Քաղաքական Ժողովը խնդրութեամբ կ'ընդունի Սպարթալեան հղբարց այս բարեգործական առաջարկութիւնը և անմիջապէս շնորհապարտութեան ուղերձ մը պատրաստելով՝ պատգամաւորութեան մը ձեռք անոնց կ'ներկայացնէ: Նոյն օրերը Գաւառ. Ժողովը գումարումը պատահելով՝ Գեր. Նախագահն ալ կ'ձանուցանէ երեսփոխանաց այս բարեգործութեան լուրը որ մեծ ցնծութիւն կ'պատճառէ և երեսփոխանները միահամուռ շնորհակալութեան բռնէ կուտան Սպարթալեան հղբարց:

Գրելիք մէկուկէս տարուան մէջ կ'աւարտի շինքին շինութիւնը՝

ընդ անմիջական հսկողութեամբ Սպարթալեան Կարապետ աղայի և Տնտեսական Խորհրդոյ, և 1879 Յունվար 14 ին կ'կատարուի նորակառոյց Հիւանդանոցին բացման հանդէսը հոյակապ շքեղութեամբ: Հանդէսին օրուան առաւօտուն Գեր. Տ. Մեղքիսեղեկ Ծ. Վարդապետ Ս. Պատարազ կ'մատուցանէ Ս. Լուսաւորչի տաճարը և յաւարտ պատարագին եկեղեցական շքեղ հանդէսով և ժողովրդեան խառն քաղմութեամբ կ'ենէ Հիւանդանոցի վերնայարկին զարդաբուն դահլիճը. հին Սպարթալեան Յակոբ Էֆէնտի իր և հարազատ եղբոր կողմէ խօսելիք ձառը սոցաղբած կ'յանձնէ Գեր. Մակար Ծ. վարդապետին (Բարխուսարեան) և կ'խնդրէ որ փոխանորդաբար վարդայ բոլոր հանդիսականաց:

Պատուական Հայ Ժողովուրդ,

« Այս շքեղ հանդէսին նպատակը նուիրական է: Մեծ պարտաւորութիւն մի ունիմ կատարելու իմ եւ սիրելի եղբորս Յովհաննու կողմէ, որ Էւրոպա (Մանչեսթըր) գտնուելուն իր զգացմանցը Թարգմանն եմ, բոլոր Զմիւռնիոյ Հայ Ժողովրդեան եւ Զեզմով բոլոր հայ ազգին առջեւ, այն նորակառոյց հաստատութեան մէջ, ուր գումարուած կը տեսնեմ ինդութեամբ ազգայնոց ընտիր բազմութիւն մը: Մեր կենաց ամենաերջանիկ օրերէն մէկն է այս օրս, վասնզի կը տեսնեմք պակուած խորհուրդ մը որ ի վաղբց մեր սրտին ու մտքին մէջ ծագեր էր եւ որ Ամենակարողին Աստուծոյ օգնութեան եւ հոգեշան ձայնի մը ներգործութեան կարօտ էր, որպէս զի մարմին առնու:

« Աստուած մեր ուխտն ու իղծը լսեց, հնչեց ու ներշնչեց այդ ձայնն մեր հոգւոյն մէջ եւ այս նորաշէն ազգային շէնքն, տառապեալ մարդկութեան այս կայանը կանգնեցաւ: Փառք կուտանք Աստուծոյ որ իր նախահնամուտիւնն ընտրեց մեզ երկօքին հարազատ եղբարքս այս վերաշինութեան:

« Ազգին ներկայ վիճակին վերահասու՝ վշտակիր կը դիտէմք իւր բազմատեսակ պիտոյքն եւ մեր կարողութեան չափոյն այս պիտոյից մին լեցնելու հոգը մեր տիրական փափաքը դարձաւ: Այս մեր փափաքը որչափ գորաւոր նոյնչափ Աստուծոյ յաջողութեամբ կ'անցին՝ մեր ակնկալութենէ աւելի՝ մեր նվաճական կարողութեան միջոցներ, եւ մինչդեռ մեր ունեցածէն բաժին մը ազգին շնորհելու խորհուրդը կը տածէք՝ մեր Գև.

բապատիւ Առաջնորդ Հօր Տ. Մ'ըքիսեդեկ Ծ. Վարդապետի Մուրատեանց հոգեշահ եւ հայրապետական քարոզներն եկան եւ աւելի եւս բորբոքեցին մեր սիրտն եւ մեր սիրելի Ազգին մըշտնջենական ծառայութիւն մը ընելու տենչը :

« Առդարեւ՝ մեր եկեղեցին, մեր վարժարաններն ու հիւանդանոցը կարօտ էին ստորութեան, բայց գլխաւորապէս ազգային հին ու խարխուլ Հիւանդանոցի շէնքն, անոր մէջ պատուարեալ խղճալեաց վիճակն, թշուառութեան հեծեծանքն մեր աչքին ներկայացան. մեր սիրտը շարժեցին, եւ երկու հարազատքս որոշեցինք ի հիմանց նորոգ կառուցանել ազգային շէնք մը որ ոչ ներքին բարեկարգ կազմաւորութիւն, ոչ կանոնաւոր մատակարարութիւն եւ ոչ որջապահութեան էական պայմաններն ունէր :

« Այս մեր որոշումն ազգային Վարչութեան հաղորդելով՝ իր յօժարաւորից հաւանութիւնը ստացանք եւ գործի սկսանք : Չենք ուզեր երկարօրէն բացատրել թէ ինչ զգացումներ կը համակէին մեր սիրտն քանի կը յաւաքանար այս ձեռնարկութիւնը, քանի կը մտածէինք որ Ստուծոյ եւ մարդկութեան հասելի եղող գործի մը սատարները լինելու բարեբաղդութիւնն ունէինք : Եւ արդարեւ՝ կան գործեր որ աւելի եւս կը գրաւեն ու կը հրատարեն մարդկային միտքն ու հոգին քան թէ փառասիրական յաղթանակներ եւ վաղանցուկ յաշողութիւններ, եւ այս կարգէն է թշուառ մարդկութեան վիշտերն ըստ կարի սփոփելու գործը եւ առկից ծագած մխիթարութիւնը :

« Եւ անհայտ կը տեսնենք կանգուն սոյն նորաշէն Մուսաւորչեան Ազգային Հիւանդանոցը, որու կառուցման առիւ վերանորոգեցաւ նաեւ յանուն Ս. Հօրն մերոյ Գրիգորի Մուսաւորչի հնակառոյց տաճարն, շինուելով նաեւ անոր կից նոր պահարան եւ սեղան որ տարևոյս առաջին օրն յանուն Սքրբոց Որդւոցն Չեքէթիայ Յակոբայ եւ Յովհաննու տիաւնագրութեամբ օծուեցաւ Գեր. Առաջնորդ Հօր ձեռքը, եւ նուիրեցաւ ՚ի փառս Տշմարտին Ստուծոյ, մշտնջենաւոր յիշատակ երկուց հարազատ եղբարցս անուան Յակոբայ եւ Յովհաննու :

« Ազնիւ ժողովուրդ Հայոց, մեր ուխտն ու փափաքը կատարելով՝ կատարեցինք ազգային պարտաւորութիւն մը եւ փոխարէն վարձատրութիւն պիտի լինին մեզի մարդասիրական գործի մը պատճառած ներքին գոհունակութեան զգացումն եւ սոյն ազգային շէնքին մէջ պատուարուելիք ազգին անկարող եւ անտէրունջ հիւանդաց աղօթքն ու օրհնենքը : Ուստի կը մնայ

մեզ Ազգին հին Հիւանդանոցը հիմնովին նորոգուած Ազգին դարձնել, մեր յատուկ շնորհակալիչը յայտնելով մեր Գեր. Ս. Հօր եւ Ս. Հարց, նոյնպէս բոլոր ազգային պաշտօնէից եւ համայն ազգայնոց որ իրենց քաջալերական ու համակիր զգացումներով դիւրացուցին մեզի այս հիմնարկութեան շինութիւնը, եւ մանաւանդ Ազգ. Վարչութեան, որ Հիւանդանոցի նոր Հոգաբարձութիւն եւ Գեր. Հայր Ղեւոնդ Փեղրալեմեանն վերատեսուչ հաստատելով իբրեւ պարտաւորիչ կանոն դրաւ մեր ազգատոհմէն միշտ երկերկու հոգի իբրեւ անդամակից ընդունիլ ամեն հոգաբարձութեան ընտրութեան ժամանակ : Այս որոշումին իբրեւ ազգային վստահութեան եւ երախտագիտութեան նշան ընդունելով՝ յատկապէս կը յայտնենք որ այս մեր կտակն գլխովին գործադրած պիտի լինին Ազգն ու ազգային Վարչութիւններն եթէ միշտ սոյն հաստատութեան ներքին բարեկարգութեան եւ բարեռջ մատակարարութեան ջանադիր գտնուին, եւ ներուի մեզ յատկապէս աղաչել Հոգաբարձութիւնն որ նոյնպէս իր ուշադրութիւնը դարձնէ թագուն խորշերու մէջ գըտնուող ազգային սնանկ ընտանիքներու, նոցա հիւանդաց ձրի բժիշկ, դեղ ու կարեւոր պիտոյք յուղարկելով, որպէս զի այսպիսի թշուառներն իսկ անմխիթար չմնան : Ազգն այս ամեն բարիքը կը վայելէ ընդ հովանաւորութեամբ Օսմանեան Պետութեան, որու Վեհապետն Սուլթան Համիտ՝ միշտ մարդասիրական զգացումներով լի՝ իր բոլոր հպատակաց ազգային հիմնարկութիւններն ու արտօնութիւնները պահպանելով՝ մեր առջեւ ազատ ասպարէզ կը բանայ մեր եկեղեցիներն, մեր վարժարաններն ու հիւանդանոցը զարգացնելու, ինչպէս նաեւ իր արժանաւոր ներկայացուցիչն, գաւառիս Վսեմափայլ Կուսակալն Համիտի փաշան՝ որու արդարակորով կառաւարկութեան ժամանակ այս հիմնարկութիւնն յաջողութեամբ կանգնեցաւ :

« Արդ՝ Սուրբ Հարը եւ Բահանայք, Ազգ. Ժողովք ու Խորհուրդք, Հոգաբարձութիւն եւ համայն Ժողովուրդ, այս համադիսական ժամուս, նորաշէն Հիւանդանոցի նաւակառեաց առիւ կը յայտարարեմ որ Չեզի պէս հանդիսական մ'եմ այստեղ, ազգային անհատ մը, որ լոկ պարտաւորութիւն մը կատարած եղաւ իր հարազատ եղբօր հետ սոյն շէնքը բարձրացնելով, որ Ստուծոյ պարգեւն է, եւ զոր կը նուիրեմք սրտի ինդութեամբ սիրելի Ազգիս Հայոց ՚ի փառս ամենամեծ անուան Ստուծոյ եւ ՚ի յիշատակ յաւիտենական :

« Ուստի՝, Գերապատիւ Ս. Հայր, առէ՛ք, կ'աւանդենք Չեզի

սոյն նորաշէն հաստատութեան քանայիներն եւ Չեզմով համ-
ըէն Ազգիս, եւ ուրիշ փառասիրութիւն մը չունինք այլ միայն
տեսնել հեռուէն սոյն հաստատութեան պայծառութիւնն ու
հրճուիլ, լսել բուժեալ տառապելոց օրհնենքն ու մխիթարուիլ,
տեսնել ազգային տան ուրիշ կարեւոր պիտոյքը հոգալու հե-
տամուտ բարերարներ եւ գԱստուած փառաբանել :

« Այս է մեր իղնը, մեր ուխտն ու կեակը, որու գործադրու-
թիւնը կը յանձնենք ամենայն վստահութեամբ մեր սիրելի Ազգին
եւ անոր յառաջադիմութեան միշտ բարեմաղթու կը մնանք :

14 Յոկար 1879

Զմիւռնիս ԵՂՐԱՐ ՅԱԿՈԲ ԵՒ ՅՈՎՀԱՆՆԵՍ ՍՊԱԲՔԱԼԵԱՆ

Այս ճառը աւարտելէն ետե՛ Յակոբ Էֆ. Սպարթալեան նորա-
շէն Հիւանդանոցի բանալիները կ'յանձնէ Գեր. Առաջնորդին կրկնե-
լով այս խօսքերը. « Ահա սոյն բանալիներուն հետ նորաշէն Հիւան-
դանոցն եւ կը յանձնեմ եւ Ձեր միջոցաւ կը նուիրեմ Ազգին : »
Սոյն սրտաշարժ վայրկեանին հանդիսականաց խանդավառ ուրախու-
թեան մէջ դահլիճին կամարածն զրան վրայ կ'երեւի կարմիր կերպա-
սի վրայ գրուած այս արձանագիրն սպիտակ տառերով .

Հ Ա Մ Ա Յ Ն Ա Ջ Գ Ե Ր Ա Խ Տ Ա Գ Է Տ

և կ'երգուի Սպարթալեան հարազատաց նուիրեալ յատուկ երգը :

Այսուհետեւ Գեր. Առաջնորդը՝ հանդէսին վեհմութենէն զգա-
ծուած՝ արտասուելից աչքերով սրտայող ասենախօսութիւն մը
կրնէ, բացատրելով ճշմարիտ բարերարութիւնը, զրուատելով Սպար-
թալեան եղբարց բարեգործութեան մեծութիւնը և շնորհակալու-
թիւն ու երախտագիտութիւն յայտնելով Ազգին կողմէ առ Բարե-
բարս. ապա ժայալինաղարչ մատենան մը բարձրացնելով ի տես
ժողովրդեան՝ յորդոր կ'կարչայ որ ամեն սք իր անունը և նուէրը
արձանագրէ և զեղեցիկ յիշատակ մը թողու սոյն հանդէսին նկատ-
մամբ :

Ապա եկեղեցական դասը կ'կատարէ անդատան՝ վասն համա-
րէն ազգին և անոր բարերար սոյ, սրմէ ետք բահանայ մը երախտա-
գիտութեան ու շնորհակալութեան ճառ մը կ'արտասանէ եկեղեցա-

կան դասուն կողմէ, իսկ 'ի դիմաց Ազգ. Վարչութեան կ'ճառախօսէ
Ա. Մաւրոյ Խմբագիր և երեսփոխան Մ. Մամուրեան՝ բարեգոր-
ծական հիմնարկութեանց և բարերարութեան նշանակութեան վրայ
պատմական—խմաստասիրական հմտալից և կուռ խորհրդածու-
թեամբ, 'ի վերջոյ ջերմազին շնորհակալութիւն յայտնելով առ
Սպարթալեան բարերարս :

Հանդէսի աւարտումէն յետոյ ժողովրդեան կողմէ պատգամաւո-
րութիւն մը կ'ներկայանայ Ս. Առաջնորդին և երկու հեռագիրներ
կ'ըջառնին 'ի Մանչէսթէր, մին առ Յովհաննէս Էֆ. բարերարն
Սպարթալեան և միւսն տեղւոյն վարչապետ Հովուին, որպէս զի
ինքն եւ տեղւոյն ազգայիններէն աննելով երթայ խնդակցութիւն
յայտնէ Հիւանդանոցի բացման առթիւ եղած հանդէսին համար :

Իսկ Յունիար ամսոյ 16 ին Զմիւռնիոյ Հայ ժողովրդեան կողմէ
բաղամթիւ ստորագրութեամբ ուղերձ մը կ'ուղղուի առ Յակոբ Էֆ.
Սպարթալեան : Ահաւասիկ այդ ուղերձին օրինակը .

Գ Ե ր ը ն ս ի ր Բ ար եր ար ,

Ամսոյս 14 ին կատարուած շքեղ հանդէսն Ձեր կանգնած
Ս. Լուսաւորչի հոյակապ Հիւանդանոցին մէջ, բոլոր Հայ հա-
սարակութեան եռանդազին ցոյցերն, ազգին եւ Ազգ. Վարչու-
թեան կողմէ թէ՛ մեր հոգեւոր Հովուին եւ թէ՛ այլոց արտա-
սանած խանդազին խօսքերն՝ Ձեր բարերար հոգին հուշակելու
բաւական չհամարելով՝ այսօր այս ընդհանուր ուղերձը կը մա-
տուցանէ Ձեզ բոլոր Զմիւռնիոյ Հայ ժողովուրդը, իր խորին
երախտագիտութեան զգացմունքը յայտարարելու :

Մարդկութեան բարերարները Նախախնամութեան պար-
գեւներն են, ժողովրդոց կենդանութեան եւ լուսաւորութեան
հերոսներն են, ու արժանի՝ չէ թէ միայն բանաւոր ու գրաւոր
երախտագիտութեան հանդէսներու, այլ փառաւոր արձան-
ներու :

Վսեմաշուք Տէր, Զմիւռնիոյ ժողովուրդը Ձեր եւ ձեզի նման
բարերարներու վսեմ գործերով պիտի պարծի, մարդկութիւնն
զՁեզ իր անմահ բարերարաց կարգը պիտի դասէ . վասն զի դուք
ասոր բազմատեսակ վիշտերուն մէկ մասը վեհամանարար պիտ-

փերով համապատիւ կը հանդիսանայ այն բարերարաց որ մարդէ կուծեան լուսաւորութեան համար զոհեցին համար ու կեանքը։
 Ուստի կադաշենը, Վսեմաշուք Տէր, ընդունիլ այս ինքնաբեր ուղերձն, որ մեր ջերմ սիրտերուն տկար մէկ արտայայտութիւնն է, եւ հաւաստի կդէք որ Հայ ժողովուրդն Ձեր վեհամեծ բարեբուծեան առջեւ թէ՛ ներկային եւ թէ՛ ապագային մէջ՝ ամենբուռնջ օրհներգու պիտի մնայ երկու Հարազատ եղբարցդ։

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Նոր Հիւանդանոցի բացման հանդէսէն երեք օր յետոյ, այն է Յունվար 17 ին կ'իատարուի երկրորդ բացման հանդէս մը Չմիւսնիոյ Հայ օրհինանց կողմէ՝ մի և նոյն շքեղութեամբ և խանդավառութեամբ։ Սոյն կրկին հանդէսներու մէջ եղած նուիրատուութեանց գումարը կ'հասնի 2100 արծաթ մէծիտի։

Ս. Լուսաւորչի մատրան օծումը կ'իատարուի մասնաւոր հանդիսաւորութեամբ՝ Հիւանդանոցի բացման հանդէսն առաջ և Ծընընդեան Ութօրեքին՝ ըստ հին բարեպաշտական սովորութեան՝ մատաղ կ'բաշխուի բոլոր ժողովրդեան՝ նոյն հաստատութեան մէջ (1)։

Որպէս զի հեռաքնակ աղգայինը կարենան զաղափար մը կազմել 1879 ին վերաշինուած Հիւանդանոցի շէնքին վրայ, կարևոր կ'համարինք անոր մանրամասն նկարագրութիւնը զեռեղել այս համարում Տեղեկադրին մէջ (2)։

Ս. Լուսաւորչեան Ազգ. Հիւանդանոցը կառուցուած է հին հիւանդանոցներու տեղոյն վրայ՝ աւելի ընդարձակ սահմանով՝ Հայոց թաղին հիւսիս-արևելեան կողմը։ Պատմականի կամ Գասապայի երկաթուղոյն կայարանը տանող Բէշիտիէ մեծ պողոտային

(1) Հիւանդանոցի բացման հանդէսէն աւելի մակրամասն եկարագրութիւնը փաստագրողը կրնան գտնել Ս. Մամիդոյ 1879 Փետրվարի ամսաթիւին մէջ։

(2) Հիւանդանոցի շէնքին եկարագրութիւնը ըրած է 1879 ին Հ. Յակոբ Վ. Բուսեան իր Չմիւսնիս եւ Հայք գործիւն մէջ, որտէ օրտաւած ենք՝ հետեւելով մակաւանդ իր շարահարգութեան ընթացքին։

ճախ թմին կողմնակի փողոցներէն վերջընթեր (Էլմասեան փողոցն առաջ) Տէրտէր կոչուած փոքր փողոցին խորը կ'բարձրանայ Հիւանդանոցի հոյակապ շէնքը որու բակի դրան ճակատը գրուած է

**Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԵԱՆ
 ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԳԱՆՈՑ
 1879**

Այս բարձր ու երկաթապատ դռնէն ներս մտնելով՝ մեր ճախ թմին վրայ կ'տեսնենք զանապանին յատուկ փոքր սենեակ մը և զեղարանը, Ժակ աջ թեկն վրայ ջուրի ընդունարան մը և աղբիւր մը, որոնք ճակատը բանդակուած է

ԱՅԷԼԵՐԻ ԶԵՐԿԵՆ ԸՆԴԵՆԻՆԻ
 ՔԻՒՆԵՐԵՅ. ՅԻՒՐԵՅ ՅԻՒՆԻՆԻ
 ՀԱՆՆԱՆ ԶԷՆ ՍՊԵՐՄԵՆԵՅ
 1879

Սոյն աղբիւրին աջ կողմը կարգով շինուած են Հոգարարձու թեկն, յատարար քահանայի և հիւրերու յատուկ երեք սենեակներ, թեկն առաջինը այժմ կ'գործածուի Հիւանդանոցի վերաբերեալ անպէտ զոյքեր դնելու։

Բակին մէջ բանի մը բայլ յառաջանալով՝ մեր զիմացը բարձրացած կ'տեսնենք բուն Հիւանդանոցի շէնքին աստիճանաւոր դուռը, աջ կողմերնիս Ս. Լուսաւորչի մատրանը՝ բոլոր կանաչագարի փողոցի պարտէզով մը որու մէջ կ'բարձրանայ դանդաղատունը, իսկ ճախ կողմերնիս երկու շքեղ արձաններ՝ իրարմէ բանի մը բայլ հետեւ մէկ դիւ վրայ, զմերերնին զեկի եկեղեցին կարճած։ Այս արձանները բանդակուած են մարմարէ, երկուքն ալ ոտքի վրայ՝ զեղեցիկ ու օրրուն զերբի մը մէջ. պատուանդանները՝ որոնց վրայ կանգնած են արձանները, յօրինուած են կտրմիսիտան մարմարինմէ՝ բաւառկիւնի ձևով ու երկու մէթը բարձրութեամբ։

Արձաններէն առաջինը աջ ձեռքը կուրծքին վրայ դրած, ձախտ վր բռնած է գալարաձև թուղթ մը՝ վրան փորագրուած հետեակ խորհրդաւոր խօսքերը.

Արարած է որ յաջողէ
է ինչ զիտեւն և շարնէն

Իսկ պատուանդանին խոյակին վրայ բանդակուած է իր յիշատակը.

Արար հանգիէ Յակոբ էֆ. Սարգսեան
Ծնւած 1825 Հոկ. 26: Մեռած 1882 Դեկ. 31:

Երկրորդ արձանը՝ աջ ձեռքը ազատ դէպի վար կախած, ձախտ խօյը նմանապէս գալարաձև թուղթ մը բռնած, որուն վրայ Խմաստունին հետեակ խօսքը բանդակուած է.

Միեղբն էմարտեան
էրկէն Տեառն է:

Իսկ արձանին օտից տակ դրուած է հետեակ յիշատակարանը.

Արար հանգիէ Յակ. էֆ. Սարգսեան
Ծնւած 1831 Յունիս 10: Մեռած 1887 Դեկտեմբեր 22:

Հիւանդանոցի Ս. Լուսաւորչայ եկեղեցիին արտաքին տեսքը պարզ է, առջևի ինչպէս նաև աջ ու ձախ կողմերը կանգնուած են սիւներ՝ սրտը կ'ծառային վեր բռնելու եկեղեցւոյ վրայ հաստատուած հովանաւոր ծածքը: Եկեղեցին ունի երկու դուռ, աւագ դուռը և աջ կողմը երկրորդ դուռ մը: Աւագ դրան ճակատը մարմարեան վրայ կոտրուած է եկեղեցւոյ շինութեան և նորոգութեան արձանագրութիւնը.

Կարողացաւ Եկեղեցին Սրբոյն Դեբոբէ
Լուսաւորչայն արքեպիսկոպոս համայն ժողովրդոց
պիտի յարազնորդութեան Տ. Սարգսեանէ
Արտեպիսկոպոսէ 1842

Եւ այժմ նորոգեցաւ արքեպիսկոպոս Երկոց Պայտա
շարացոյ Յակոբայ և Յովհաննէս Սարգսեանց
Յար. Տ. Մեկտեմբեր Ծ. Վրբ. 1879:

Աւագ դուռը երկաթաշէն է և կրկնափեղկ, շէնքը կամարափայտ է, առանց սիւնի. վերի կողմը երեք կարգ զոյգ զոյգ երկաթեայ ձողեր մէկ պատէն միւսը երկնցած են՝ կամարը որմերուն վրայ հաստատուած համար: Եկեղեցւոյ մեծութիւնն է 12 մէթր երկայնութիւն՝ աւագ դռնէն մինչև խորան, և 7 1/2 մէթր լայնութիւն. քարաշէն ու դօրաւոր պատերու հաստութիւնն է 80 հարիւրորդա մէթր. վերնատուն չունի, յատակը պարզ է և փայտաշէն որուն վրայ դրուած են երկու կարգ երկայն նստարաններ և աթոռներ: Դասը յատակէն աստիճան մը բարձր է, միջավայրը կիսաբոլորակ ձևով դուռն է և երկաթեայ վանդակով մը բաժնուած՝ երկու ծայրերը թաց: Դասին առջևը կ'բարձրանայ մարմարաշէն բեմը 80 հարիւրորդամէթր բարձրութեամբ, որուն վրայ մէկ կարգի մէջ կանգնուած են երեք խորան՝ կիսաբոլորակ ճակատով և իւրաքանչիւրը աջ ու ձախ կողմէ ունենալով զոյգ մը սիւներ: Աւագ խորանը օժուած է յանուն Ս. Գրիգոր Լուսաւորչի, աշակողմանը յանուն Ս. Հռիփսիմէ Կուսի, ձախակողմանը յանուն Ս. Գայիանէ Կուսի, օժոցն է Առաջնորդ Մատթէոս Եպիսկոպոս, որ և Հռիփսիմէ և Գայիանէ կոյսերուն ուրոյն մասունքներն նուիրած է եկեղեցւոյն: Աւագ խորանին ճակատին վրայ դրուած է.

Ձեւը Ինչ Ինչրեցեք է Հօրէ յանուն Եւ Կոյն յեղ:

Դասին ձախ կողմէն բացուած դուռ մը կ'առնի աւանդատունը կամ փորքիկ տաճարը որ պարտէզին վրայ ունի իր յատուկ դուռը: Այս տաճարին երկայնութիւնն է 2, 50 մէթր և լայնութիւնը 3 մէթր. ունի փոքր խորան մը արեւելեան պատին մէջ յանուն Որդուց Որոտման, իսկ ձախ պատին վրայ խորշի մը մէջ զետեղուած է մկրտութեան աւագանը. իբր աւանդատուն հաս կ'ըլլուն նաև եկեղեցական իրեղէններ, շապիկ, բուրձառ, աշտանակ, մամ և այլն: Այս տաճարին պարտէզին վրայ նայող դրան արտաքին ճակատին վրայ մարմարեան հատար մը կ'ըլլէ հետեակ յիշատակարանը.

Մարտի 1879

Կանան Որդուցն Որոտման արքեպիսկոպոս Երկոց Երբարց
Կոնստանդնուպոլսոյ Յակոբայ և Յովհաննէս Սարգսեանց

Եկեղեցւոյ աջ կողմը արտաբուստ կ'երևի մատրանաձև քարա-
կիր շինութիւն մը որ թէև 'ի ներքուստ եկեղեցւոյ հետ յարաբերու-
թիւն չունի, բայց զրա՛ն եկեղեցւոյ շէնքին հետ մէկ մարմին կը
կազմէ և ձախակողմը գտնուած տաճարին կամ աւանդատան իբր
համապատասխանող թև մը զտես ելած է պարտէզին մէջ: Այս
մատուռը երկը կողմէ միայն որստ ունի, առջևը վերէն վար բաց է-
երկաթեայ դարպաձև վանդակ մը հաստատուած և ապակեայ փեղ-
կեղով ու դռնակով զոցուած է: Տեղոյն մեծութիւնն է 2, 50 մէթր
երկայն և 1, 80 մէթր լայն. իբր զբոլ կան միմիայն բանի մը
պատկերներ և առնց լիայ կախուած քարեպաշտական նուէրներ:
Այս մատրան արևելեան պատին վրայ կախուած է Ս. Լուսաւորչի
պատկերը 14 շարժարանքներով՝ արծաթեայ շրջանակով պատած
զոր շինել առւած է Տիկին Փոլինա Ս. Սպարթալեան՝ 1893 ին-
Պատկերին վերի կողմը գրուած է հետեւեալը.

Յշակ Ղենաւան Մհէ. Պարտուաբն 1827

Իւշիւն յէջանդանոցէն

Իսկ վրան կախուած են զանազան բարեպաշտական նուէրներ,
ինչպէս արծաթեայ սիրտեր, ձեռքեր, սրունքներ, տորեր, և այլն:

Եկեղեցին և մատուռը շինուելէն յետոյ, ինչպէս առաջ յիշե-
ցինք, կատարեալ ուխտասեղի մը կ'դանայ հոս: Ամեն երկուշաբ-
թի, որ մատրան այցելութեան նուիրուած օրն է, ամեն դասակարգէ
բարեպաշտ ազգայինը՝ մանաւանդ կանայք կուզան հոս ուխտի, ա-
զօթելու, մամ՝ վառելու և իրենց լուսման ձգելու: Եոյն օրը մատրան
առջև կ'դրուի սեղան մը, վրան արծաթեայ սնակ մը՝ խաչահանգու-
տի շրով, քովը արծաթէ ափսէի մը մէջ երկու արծաթ զղաչներ,
սրնցմով ժողովուրդը կ'խմէ խաչահանգուտի շուրէն: Այս մի և նոյն
սեղանին վրայ կ'դրուին նաև Ս. Լուսաւորչի և այլ մատուռներ՝
արծաթեղէն սուփերու մէջ ամփոփուած:

Նկարագրելէ յետոյ Հիւանդանոցի առաջակողմը գտնուած
պարտէզը զբաւոյ մասերը, մանկնք բուն Հիւանդանոցին մէջ: Եւն-
քը բարուկիր է, եռայարկ և խաչաձև, իբր 65 մէթր երկայնութիւն
և 14 մէթր լայնութիւն ունի առաջակողմը. խաչաձևը զուրս ելած

թեհերուն մէջ շինուած են վերի յարկը տանող սանդուղները: Հի-
ւանդանոցին շուրջը պատած է պարտէզ մը, որով ամբողջ շէնքն
ունի բաց և օդաւէտ դիրք մը: Այս ընդարձակ պարտէզին մէկ կող-
մը՝ Հիւանդանոցին ետևը շինուած է արանց յիմարանոցը՝ 8 սեն-
եակներէ բաղկացեալ որոնք շատ ողորմելի աեսք մը ունին, աւելի
զարշահոտ ու մթին նկուզներ՝ բան թէ յիմարաներու յատուկ պա-
տուարան: Հիւանդանոցի դռնէն ներս շմտած՝ ձախ կողմը կ'երևի
Հոգաբարձուներու խորհրդարանը, որու ճակատը մարմարիով մը
վրայ քանդակուած է հետեւեալը.

« Խորհրդարանն Հոգաբարձուաց Կոստանոս շէնքն-
երկոց եղբորց Յուրբոյ և Յովնանոս Սպարտալեանց 1879 »:

Խորհրդարանին կից և նոյն կողմին վրայ շինուած է ընդար-
ձակ և լուսաւէտ սրահ մը՝ իբր Ծերանոց 15 անկողիններով և իրեն
յատուկ սեղանատունով: Այս սրահին զրան ճակատը կայ հետեւեալ
արձանագրութիւնը մարմարի վրայ քանդակուած.

Ծերանոց Կանգնեցա-
արդեմք հանգուցել Եւսէ Յ. Եոյն աւել
ի յիշարի էր. 1 Մայիս 1899

Ծերանոցէն բանի մը բայլ անդին կ'գտնուի Լուսացարանը՝ իրեն
յատուկ մասերով. աւելի հետուն մէկ կարգի վրայ շինուած են դեա-
նայարկ և փայտաշէն վեց սենեակներ՝ իբր կանանց յիմարանոց.
այս սենեակները համեմատաբար աւելի մաքուր ու կոկիկ են քան
այլ յիմարաներու յատկացեալ սենեակները:

Հիւանդանոցի զրան առջևը չորս սիւներ վեր կ'բռնեն զրան
վրայ շինուած հովանաւոր զարդաձև ծածկոյթը: Այս ծածկին վե-
րևը՝ երկրորդ և երրորդ յարկին մէջտեղը զետեղուած է երկայնաձև
բար մը, որուն մէկ ծայրը ֆրանսերէն, միւս ծայրը տանկերէն գրե-
րով, իսկ միջավայրը հայերէն քանդակուած է Հիւանդանոցին շի-
նութեան յատուկ յիշատակարանը.

« Ի ճշան ամենաշէրմ Երախտապիտուքեան Ազգային վար-
չութեան Հայոց Զմիւռնիոյ, կանգնէ զայս Յիշատակարան յա-

նուն երկուց հարագատ սլայազատացն Յակոբայ եւ Յովնաննու Սպարբայեանց, որոց առատամեռն ծախիւք եւ գուարբուն ջանիւք կառուցաւ հոյաշին Հիւանդանոցս ամենայն պարսկայիւք հանդերձ ի 1879 ամի, յԱռաջնորդութեան Տ. Մեքիսեղէի Ծ. վարդապետի Մուրատեանց եւ նուիրեցաւ ի պատասպարան անտ՝ րունջ հիւանդաց եւ անկարողաց Ազգիս Հայոց. ի փառս մարդասիրին Աստուծոյ, եւ ի յիշատակ ճշմարիտ սղորմածութեան եւ տոհմասիրութեան պզնուատումն Գերդաստանին Սպարբայեանց, զոր պահապանեցի Տ. ր անասան ի պարծանս Ազգիս. Ամեն. »

Իսկ նախկին շէնքին յիշատակարանը, զոր իր կարգին յիշեցինք, շրջանակի մը մէջ զրուած և կախուած է ներսը սրահին պատէն, այս հին յիշատակարանին տակ զրուած է նաև ներկայ շէնքին վերաբերեալ երկրորդ զրուածին մը այսպէս.

« Իսկ 1879 րունին ի հիմանց նորոք կառուցաւ հոյակապ եւ շքեղ բան գառաջինն, ի Հայրապետութեան Տեառն Գեորգայ Դ. կաթողիկոսի ամենայն Հայոց, ի Պատրիարքութեան Սրբոյ Երուսաղէմայ Տեառն Եսայեայ Արքեպիսկոպոսի, եւ ի Պատրիարքութեան կոստանդնուպոսոյ Տեառն Ներսէսի Արքեպիսկոպոսի, եւ յԱռաջնորդութեան քաղաքիս Տեառն Մեքիսեղէի Ծայրագոյն վարդապետի, միմիայն արդեամբք երկուց վեհագն պայազատաց Յակոբայ եւ Յովնաննու Սպարբայեանց: »

Հիւանդանոցի աստիճանաւոր դռնէն ներս կ'տարածուի ընդարձակ սալա յատակ սրահ մը, որուն երկու կողմերը կ'գտնուին միևնոյն մեծութեամբ ու թը սենեակներ՝ թուազրեալ. առաջին դէմ առ դէմ գտնուած երկու սենեակները յատկացուած են Տեսչութեան, միոյն հակառը գրուած՝ Գրասենեակ ու միւսին սենեակ Տեսչի, իսկ մնացեալ սենեակները հիւանդաց, խրաբանչիւրն իր մէջ ունենալով երկու մահճակալ ('ի պահանջել հարկին երբեմն երեք), աթոռ մը և փոքր սեղան մը: Սալա յատակ սրահին զիմացը կ'տեսնուի լայն և ընդարձակ սենեակ մը որու զրան ճակատը գրուած է Սեղանատուն, իսկ աւելի վարը հաստատուած մարմարինն բար մը առճիւրէն և հայերէն բանդակով.

« Դռներ ազգէս Հայոց հոյակապ Հիւանդանոցս ՚ի հիմանց կառուցաւ յոթարկած և առարկելուն արդեամբք երկուց վեհանն էրբարց Բարբարոց Յակոբայ և Յովնաննու Սպարբայեանց 1878 ՚ի Չօտանէս: »

Սեղանատան ներսի կողմը՝ միևնոյն զրան ճակատը նայուելու հաստատուած է մարմարինն մը հետեւեալ բանդակով.

« Այդ սենեկոսն ՚ի շէնք յուսան և զուս Կերպար Նոցս ՚ի ժամանակնս զիւրն քո և լցուցանելու զսենեկոսն քաղցրութեամբ կամս քո քո Գահապարտ գՏեառնէ զի Բարբ և յաւերեան և ողբումն Նորո: »

Սեղանատան աջ կողմը դէպի երրորդ յարկը տանող սանդուղինն տակը կ'գտնուին սպասարարաց յատուկ երկու փոքր սենեակներ, իսկ ետևը հանդերձանոցը, խոհանոցը, մատանը, բաղնիքը, ջրը ընդունարանը և հիւանդ կանանց յատուկ վեց սենեակներ երկու կամ երեք անկողնով, ամենքն ալ թուազրեալ: Մինչև հիմա նկարագրուած մասերը կ'կազմեն երկրորդ յարկին բաժանումները, իսկ առաջին կամ գեանայարկը կ'գործածուի իբր փայտանոց, ածխանոց, և այլն: Սեղանատան ետևը գտնուած մասերուն վրայ ուրիշ յարկ չըլլալուն՝ շէնքին այս մասը կրկնայարկ ձև մը առած է:

Շէնքին խաչաձև դուռս ելած երկու թևերուն մէջ հաստատուած են փայտաշէն սանդուղիներ որոնք կրկին զարձուածներով երբորք յարկը կ'հանն: Այս սանդուղիներուն առաջին զարձուածին ճակատը՝ պատին վրայ գրուած է՝ միոյն Աւետարանի և միւսին Սաղմոսի խօսքերը, այնպէս որ մէկ թևին սանդուղին վեր ելնողը իր զիմացը կ'տեսնէ այս զրուածանոց մին, և ապա երկրորդ թևին աստիճաններէն վար իջնելով՝ առջևը կ'տեսնէ միւս զրուածինը: Ահաւաստիկ առաջինը.

« Զի քաղցեալ և երբոք ինչ ոտեւ Մարտեցայ և արբոցի քն Օրբ էի և ժողովեցի քն, զիւր և զբեցոցի քն, հիւանդ էի և արեւի քն. ՚ի քանդի ՚ի և էի քո քո. Մարտի. ԻԵ. 35-36. »

Երկրորդ.

« Երանի՛ որ իւրեկ զազադն և զանանի յառար զբի իրի զն Տեր: Մարտի, քի քոտարարը զի սեֆելիբի քի շէնքիւր: Աւետ քեքի կիւնքիւր քեքի քոտարարը: Սաղմոս: »

Մանուկին առաջին և երկրորդ դարձուածներէն վեր ելնելով՝
 կ'պարզուի լուսւոր և ընդարձակ սրահ մը՝ որ զեմ առ զեմ բարձ-
 ճրացող սանդուխներուն աջ ու ձախ կողմը երկայնութեան վրայ
 տարածուած է: Մրահին երկու կողմերը զիմացէ զիմաց կ'գտնուին
 12 սենեակներ, իսկ շէնքին ճակատը շայնութեան վրայ գտնուած
 նրկու սենեակները որոշուած են բժշկին, վիրաբուժութեան և բժշ-
 կական գործողութեանց, երկու սենեակ և ա սրահին միւս ծայրը
 շայնութեան վրայ, որոնք առջի 12 սենեկաց հետ հիւանդաց սահ-
 ձանուած են՝ իւրաքանչիւրը մէկ պատուհանով լուսւորուած և
 թուազրեալ: Այս սենեակներէն զատ կան նաև չորս սենեակ սան-
 դուխներու վրայ շինուած, որոցմէ երկուքը կ'ձառայեն իբր ննջարան
 հիւանդապահներուն և զեղագործին, իսկ միւս երկուքը իբր հան-
 դերձատուն:

Երրորդ յարկի սրահին ձեղունին միջաօայրը՝ զէպի վեր բարձ-
 րացած է բառանկիւն գմբեթ մը որու շուրջը եղած պատուհաններէն
 արևուն կենսատու և լուսւոր ճառագայթները ներս թափանցելով՝
 կ'կազդուրեն հիւանդները և ապաքինածները: Գմբեթի ձեղունին
 վրայ նկարուած է սրտոտ գոյներով հրեշտակ մը և հետեեալ բեր-
 թուածը՝ որուած յիմակիս Առաջնորդ Ամեն. Տ. Մկրտիչեղեկ Աբրե-
 տիսկոսոս Մուրաեանցէ:

Հրեշտակ եմ ես սոս քեռասարած,
 Կարդացե՛ք պատգամս այս գիր արձանաց,
 Զարակ մի քուս յերկրէս վերապաց
 Խառնեցաւ 'ի գունդս դասուց հրեշտակաց:

Անունն Մարտիրոս ճե՛ս Սպարապետնց,
 Գրած հօր որդեակ տեսեալք զեղապակժ.
 Յերկիր ևայեցաւ յերկնից 'ի բարձանց,
 Յարսուր շարժեցաւ վասն մահացուաց:

Հայր ու հօրեղբայր պատանոյն անմեղ,
 'ի խանդ յուզեցան արտիք սիրագեղ.
 Առ ի՞նչ արսասուփ որդեակ գրուրեան
 Գոյեցիկն անդէն եղբարքն երկոյեան:

Սրբե՛ղ դու կամիս զարսասուս յայաց
 Որքոց սնանկաց հիւանդ աղիասաց,
 Օն եւ մե՛ք 'ի դոյն խորհուրդ սիրապակժ
 Վառեայ կամք հոգուով 'ի բազում ավագ:

Սասցիկն եւ անդէն շինե՛ղ սկսան
 Զայս յարկ հոյակապ խորան գրուրեան.
 Ե՛տեւ Մարտիրոս, երեսն ժոյսեցան,
 Հրեշտակ ընդ մարդկան եղե՛ն օրհնաբան:

1878

Սոյն բերթուածին իմաստը կ'բացատրուի այնու գի Սպարթալ-
 նանք ռնեցած են Մարտիրոս անուն զաւակ մը, որու վաղահաս
 մահուան յիշատակին համար իր արեւելիները կանգնած են հոյաշէն
 Հիւանդանոցը:

Հիւանդանոցի թէ՛ երկրորդ և թէ՛ երրորդ յարկին մէջ պատշա-
 ճաւոր վերքով զեակուած են ճեմիշներ՝ խողովակներու միջոցաւ
 քերուած ջրով և հականկիւններով միշտ մաքուր պիճակի մէջ պա-
 հուած:

Հիւանդանոցը շրջապատող սրահէզը, թէ՛ և կանաչագարդ և
 երկաթէ վանդակներով եզերուած, անինամ և անյարգար է ու սո-
 վորական սրահէզէ մը տարբերութիւն չունի. հոն կ'պակսին հի-
 ւանդներու շրջագոյութեան կամ երեկոյեան ու առաւօտեան զոյ՝
 օգլին պառնայնք ընելու կամ նստելու համար աւազուտ հոյանաւոր
 ուղիներ, նստարաններ, աթոռներ և այլ այսպիսի աշքը պարարող
 տեսարաններ և հանգստաւէտութեան պայմաններ, որոնք կանոնա-
 տօր հիւանդանոցի մը համար անհրաժեշտ են:

Այս է ահաւասիկ 1879 ին վերաշինուած Ս. Լուսուորչեան
 Հիւանդանոցի շէնքին ամբողջական նկարագիրը իբ բոլոր մանրա-
 մասնութեամբ: Այս վերաշինութեան առթիւ խմբագրուած է յատուկ
 կանոնագիր մը՝ Հիւանդանոցին ներքին գործառնութիւնները, մա-
 սակարարութիւնը և բարեկարգութիւնը սահմանող և զայն վարող-
 ներու պաշտօնն ու պարտաւորութիւնը ճշգոյց:

Ազգ. Հիւանդանոցի նոր շէնքը կարծես նոր եռանդ մը առաջ կ'ըբերէ Իզմիրի ազգայնոց և մանաւանդ պաշտօնական մարմիններու մէջ և աւելի մեծ հոգածութիւն ու դուրսդարանք ցոյց կ'տրուի զթու-
թեան յարկին տակ պատասպարեալ Հիւանդներու և թշուառներու նկատմամբ. նուիրատուութիւնը կ'առատանան, յանուն Հիւանդա-
նոցի կտակներ կ'ըլլան բարեսէր ազգայնոց կողմէ և հեղահետէ կ'աւելնան եկամտից ազբիւրները, Հոգաբարձուք և Խնամակալու-
հիք պարբերաբար երկամեայ շրջանով և իմաստուն ու շրջահայեաց անտեսութեամբ կ'մատակարարեն Ազգին տունը՝ ջանալով միշտ կարելի եղածին չափ հաւասարակշիռ պահել հասութից և ծախոց երերուն վիճակը: Հիւանդանոցի այս զոհացուցիչ կացութիւնը և բարոք մատակարարութիւնը կ'շարունակէ մի բանի տարիներ և գոյլետի ու գնահատական սողերով կ'արձանագրուի տեղական լրագրութեան մէջ:

« Տեղւոյս ազգային հաստատութեանց լաւ մատակարարութեան համար, կ'զրէ Ա. Մանուշ 1884 Մայիսի թուոյն մէջ, թէ՛ Մ. Նախագահին և թէ՛ Վարչութեան կողմէ տրուած խնամքն ստուգիւ զս-
վետից արժանի է: Յատկապէս շնորհակալութեան և բաջակնութեան անձխտելի իրաւունք ստացած են մի բանի տարիէ 'ի վեր Ազգ. Հիւանդանոցի հոգաբարձուք՝ Մեծ. Կարապետ էֆ. Ստար-
թալեան, Ստեփան էֆ. Փանոսեան, և Հոգաբարձուհիք Աննի Տիկնայք՝ Սրբուհի Աւագեան, Իսկուհի Աղազարեան, Նունէ Թու-
մայեան, Տուտու Մելիքեան, Եղիս. Գազապղեան, որ անդուր կը հսկեն ո՛չ միայն Հիւանդանոցի ներքին կանոնաւոր մատակարարու-
թեան, այլ և բարեկարգութեան և մարքութեան, այնպէս որ թէ՛ ազգային և թէ՛ օտար այցելուք կ'վկայեն միշտ որ մեր Ազգ. Հիւան-
դանոցի օրինակելի կանոնաւորութիւնն մեծ պատիւ կ'ըբերէ Իզմիրցոց ողորմասիրական և բարեպաշտական զգացմանց և արդի հոգաբար-
ձուաց ու հոգաբարձուհեաց ազնիւ հոգոյն և անուան »:

Գլխազգաբար այս նախանձելի վիճակը երկար չտևեր և տաղ-
նապալի բնդհատումներ կ'ունենայ յոռի մատակարարութեան և զեղծումներու շնորհիւ, միւս կողմէն կանոնապրի տրամադրութիւն-
ները ճշդիւ ու խստիւ գործադրելու փոյթ չաարուիր ոմանց հոգա-

բարձուաց կողմէ, լաւ չըմբռնուած մարդասիրութիւնը և զթութեան զգացումը ծայրայեղութեան կ'հասնի և տունց նկատի առնելու Հիւանդանոցի համար սահմանուած պիւտձէն և եկամուաներու քա-
նակութիւնը՝ անխոր ամեն կարգի հիւանդներու, անկարներու և անկեանքներու համար կ'բացուին Հիւանդանոցի դռները, որու ան-
խուտելի հետեանքը կ'ըլլայ խանգարում ելեւմտից հաւասարակշու-
թեան և պարտքի տակ իյնալու ցաւալի անպատեհութիւնը:

1887 Գեղեկամիրերին կ'հրաժարի առաջնորդութենէ Տ. Մելիք-
սեպեկ Սրբազան՝ 11 տարուան պաշտօնավարութենէ յետոյ և 1889 ին իբր Պատրիարքական փոխանորդ Իզմիր կուգայ Տ. Յով-
սէփ Վ. Այլագեան, իսկ 1892 ին Առաջնորդ կ'ընտրուի Տ. Ներ-
սէս Վ. Արսլանեան, ազգային վարչական գործերը աւելի կաժ-
նուազ կանոնաւորութեամբ կ'շարունակուին, իսկ Հիւանդանոցի վիճակը կ'մնայ զրէթէ նոյն՝ առանց զգալի փոփոխութիւն մը կրելու,
Հոգաբարձութիւնը իրարու կ'յաջորդեն՝ միշտ զրամական տաղնա-
պէ նեղուելով իրենց մատակարարութեան մէջ, բանի որ Հիւանդա-
նոցի յատկացեալ 75 հազար դրուչի պիւտձէն իջած էր 66 հազա-
րի կամ 2000 մէճիտի: Այս կարևոր զեղչը փոխարինելու համար
Հոգաբարձուք կ'ստիպուին նորանոր միջոցներ խորհիլ և գործադրել,
այսպէս Իզմիրի թեմական եկեղեցիներուն մէջ Հիւանդանոցին 'ի նպաստ մշտնջենական զանձանակներ կ'հաստատուին և ժամա-
նակ ժամանակ նուիրահաւաքներ կ'զրկուին թեմերը, որպէս զի
թեմական բարեկեցիկ ազգայններէ հաւարեն իրենց բերքերէն կամ
ձեռագործներէն մաս մը յանուն Հիւանդանոցի պատասպարելոց,
որոնց մեծագոյն մասը միշտ թեմականներէն եղած է, թէև հակա-
ռակ հասոյթի այս արտակարգ ազբիւրներուն՝ մէն մի Հոգաբարձու-
թիւն իր երկամեայ շրջանը ամբողջ կամ կիսովին լրացուցած և
հրաժարած պահուն աւելի ստուարացած պարտք մը կ'կտակէ իբր
յաջորդին և ազգային անուրի, օտարազգի պարտաւորներու առջև
ազգին պատիւը փրկելու համար, մեծամեծ զոհողութիւններ բնելու
կ'ստիպուի: Այս հոգաբարձութեանց անդամներէն ոմանք նշանակե-
լի և գործօն զեր մը կատարած են զրամական խիստ տաղնապալից
յուանակներու մէջ, սղի 'ի բոլին աշխատելով Հիւանդանոցի մա.

տակարարութիւնը սրատուաբեր կերպով վարելու և երբեմն տասն-
 ձինն կուրծք տալով թէ՛ նիւթական դուարութեանց և թէ կասկա-
 ծոս հասարակութեան տեղի կամ անտեղի խժրժանաց ու անար-
 դար յարձակումներուն: Այսպէս յիշատակելի են Ստեփան Փանոս-
 եան, Կիրակոս Էջիղեան, Վաղարշակ Ոսկանեան, Նշան Հաբեղ, Գրիգոր Փափագեան և այլք, որոնց պաշտօնախորութեան օրով կը
 կաարուին նաև ինչ ինչ նպաստաւոր կարգադրութիւններ, օրինա-
 կի համար, Եւրոպայէն կ'ընտրուին Հիւանդանոցին համար անհրաժեշ-
 տօրէն կարևոր եղած վիրաբուժական գործիքներ, օքտրասիօճի սեն-
 եակը 'ի նորոյ կ'կահաւորուի մասնաւորապէս Պերլինէ բերել տալով
 ինստ լաւ տեսակէն անդամահատութեան սեղան մը իր սարագա-
 յիւք և ուրիշ դանդան գործիքներ, որով այդ սենեակը կա-
 տարեղապէս կ'ժառայէ իր նպատակին: Տորթ. Ճէլեպեան, Բօլ
 Էմիրդէ, Էֆսթրապիտի Սիսէօն և ուրիշ բժիշկներ ժամանակ մը ձրի
 և անձնուիրաբար կ'այցելեն Հիւանդանոց և կ'դարմանեն հայ և
 օտար հիւանդներ. վերջապէս Ստեփան Էֆ. Յ. Սպարթալեան Հի-
 անդանոցի վերի յարկէն երկու կողմանց սանդուխները ապակեայ
 դռներով և փեղկերով պատուարել կուտայ իր անձնական ծախքով,
 որով ամբողջ վերի յարկը կատարելապէս կ'ապահովուի ձմեռուան
 ցրտաշունչ քամիէն:

Փաղափար մը կազմելու համար 1887—1888 և յաջորդող
 տարիներու մէջ Ազգ. Հիւանդանոցի ընդհանուր կացութեան վրայ
 աքժան կ'համարենք ինչ ինչ պարբերութիւններ բաղել առ Քսոյ.
 Ժողովն ուղղուած պաշտօնական տեղեկագրէ մը զոր ստորագրած
 են՝ իբր Հիւանդանոցի Հոգաբարձու՝ Վաղարշակ Կ. Ոսկանեան և
 Ստեփան Փանոսեան:

« Խորապէս կ'ցաւինք որ արդէն իսկ ունեցած պարագրներն
 քանի մը հազար զահեկանի պարտուց յաւերժաբար աւելի ստուարա-
 ցած է՝ հակառակ մեր ամեն ջանից և մարդկային հնար եղած աշ-
 խասանաց:

« Հիւանդանոցի ծախուց յաւերժան պատճառք բացայայտ են և
 աւարակոյս շունիմք թէ Պատկ. Ժողովոյ տեսութեան իսկ վերջաժ-

չնիւ և սակայն աւելորդ չեմք համարեր նոցա մի բանին աստ նշա-
 նակիւ: Նախ հարկ է զիսնալ՝ որ Հիւանդանոցի հաստատութեան
 'ի վեր երբէք հիւանդաց այսքան յաճախութիւն ունեցած չեմք սոյն
 տակալութիւնը ունեցող շրջանի մը մէջ, այնպէս որ եղաւ շարաթ՝
 որ հիւանդաց թիւն 61 ի հասաւ և Յունիսի 30 էն ալ 48 հիւանդ
 ունէինք անկողնոյ մէջ: Երկրորդ՝ 1300 ի շախ հիւանդ ոտքի վրայ
 նայուած են և որոց կէտէն աւելին հարկ եղած զեղօրայք ձրիապէս
 տրուած են: Երրորդ՝ ժամանակէ մը 'ի վեր բաղարիս Ազգատասի-
 րաց Ընկերութիւնն զպրեցուցած լինելով անանկ հիւանդաց ձրիա-
 պէս զիկ մատակարարելն՝ այժմ նոյն կարգի հիւանդք խուսնկրամ
 կ'լինեն յԱզգ. Հիւանդանոցն 'ի ինչիւր զեղօրէից, և Հոգաբարձու-
 թիւնս ալ 'ի տես այս խղճալեաց ողբալի կացութեան՝ անկարող
 կ'լինի նոցա ինչիւրը մերժել:

« Յայտնի է Պատկ. Ժողովոյ թէ 1887 Նոյեմբեր ամսոյ մէջ
 Վաղարշակ Էֆ. Ոսկանեան գանդասած էր Ժողովոյ յայտնելով
 Հիւանդանոցի դրամական նեղ կացութիւնը, նորա 28 հազար զա-
 հեկանի պարտուց ներքև գտնուիլն, որ կրնար անտես անուելով
 40—50 հազարի յանդիւ և այսպէս ազգային արկիլն 'ի նորոց
 ապրիապի սրտաճառ լինիլ և յաւելցուցած էր միանգամայն թէ ինք
 առանձինն կ'մերժէր այսօրինակ սրտախտանաւորութեան ներքև
 լինիլ և բոլոր դուարութեանց բեր առանձին բանալ:

« . . . Հոգաբարձութիւնս նկատելով որ Պատ. Տնտեսական
 Խորհուրդն դրամական անձկութեան մէջ կ'գտնուի՝ արժան չհամա-
 րեց Պատկ. Ժողովոյ կողմէ արտօնեալ 50 տոկին պահանջելով
 ազգ. արկիլն վրայ ծանրութիւն մի ևս բարդել, այլ ջանաց մէկ
 կողմէ ըստ կարի խնայողութիւններ ընել և միւս կողմէ որքան հնար
 էր հասոյթի նոր աղբիւրներու 'ի ինչիւր լինիլ և այսպէս շարունա-
 կել Հիւանդանոցի մատակարարութիւնը լաւագոյն օրերու և ժամա-
 նակի ակնկալութեամբ, և այս ընթացքով կարող եղաւ բառամտայ
 միջոցի մէջ 28 հազար զահեկանի պարտքն 17 հազարի իջեցնել,
 այլ սակայն յետոց հիւանդք այնքան բազմացան, մանաւանդ եր-
 կաթնուղեաց հայ և տաճիկ բանուրք, որ սրտաքն դարձեալ այս ա-
 րիճանի հասաւ: Բժշկին հետ խորհրդակցութեամբ որոշեցինք 40

հիւանդէ աւելի չընդունիլ՝ նկատողութեան ատենելով թէ՛ մեր ձեռք
եղած նիւթակոսն միջոցներու անձկութիւնը և թէ միանդամայն ան-
կողնոց աւելի ստուարութիւ հիւանդաց համար անբաւական լինիլն :

« Բայց միթէ հնա՞ր էր այսպիսի որոշում մի գործադրել
ի տես բաղմամբիւ խղճալի հիւանդաց որք կ'ըլմէին ՚ի Հիւանդա-
նոցս թախանձաղին խնդրելով պատասխարան ու զարման, միթէ
հնա՞ր է զանոնք մերձել, ո՛չ երբէք, զի այսպիսի ընթացք մի խղ-
ճի, զգացման և ազգային արձանատւութեան հակառակ կ'հա-
մարէինք և կ'համարեմք, հետեապէս ամեն անկարող հիւանդք որ
եկած են՝ սիրով ընդունուած և խնամով զարմանուած են յանդոր-
ութիւն մեր խցի և ՚ի պատիւ Զմիւռնիոց Հայոց : Եւ երբ այս
ամենուն հետ նաև նկատողութեան ատումք, ինչպէս վերև յայտ-
նեցինք, Աղբատասիրաց Ընկերութեան ձրի զեղ մատակարարին
զաղբեցնելն և այս կարգի ազբատաց և տառապելոց Հիւանդանոցի
նոր ծախուց զուս մի բանալն, այն ատեն Պատ. Ժողովը կրնայ
լիուրի վերահասու լինիլ թէ զբամական այսպիսի արտաբոց կարգի
ծախուց ներքև զանուած եմք : Հետեապէս կը խնդրեմք թախանձա-
ղին որ Պատկ. Ժողովը հաճի զայս ամենն նկատողութեան ատենելով
մեզ զբամական օգնութիւն մի ընձեռել : Կայցութիւննիս յոյժ անձուկ
է և մանաւանդ մեծ նեղութիւն կը կրեմք զեղբրու, ալիւրի, մսի և
զանազան ծախքերու մատին :

« Կը կարծեմք թէ բանի որ Աղբատասիրաց Ընկերութիւնը զաղ-
բեցուցած է ազգային անանկ հիւանդաց ձրի զեղ մատակարարելն՝
այժմ իւր ծախուց համար լիովին կը բաւէ հանդանակութեամբ իւր
հաւաքած զբանն : Հետեապէս նոյն Ընկերութեան ազգային արկղէն
պահանջած ստիտն եթէ յաակացուի Հիւանդանոցի՝ յոյժ ՚ի զեղ և
յարմար կուզայ այս որոշումն, նկատելով որ նոյն Ընկերութեան
չնորհներէ զրկուած անձինք այժմ Հիւանդանոցի վրայ ծանրա-
ցած են . . . »

Աւելի կամ նուազ տարբերութեամբ գրելով այս եղած է Աղբ.
Հիւանդանոցի ելեմական վիճակը երկար տարիներ շարունակ,
միշտ զբամական տալանազ, միշտ գանդաւու Հոգարարձութեանց

կողմէ, զժողովութիւն և աններող ըննալատութիւն հասարակութեան
կողմէ, հրաժարում Հոգարարձուաց ու երբեմն գժտութիւն Տնտես.
Խորհրդոյ հետ հաշուակալութեան և համարատուութեան կարևոր
խնդիրներու մասին, և այլն : Իսկ 1898 տարւոյն վերջերը կ'զանենք
որ Հոգարարձու տեսարց նոյնպէս Խնամակալուհի տիկնանց շնորհիւ
Հիւանդանոցը բարեկարգութեան և մաքրութեան երես կ'տեսնէ,
ինչպէս նաև բիշ թէ շատ կանոնաւոր մատակարարութեան : Այս
միջոցին Հիւանդանոցի նոր պիտոյից հետ նորագոյն ծախքի աւել-
նալով, խնամակալուհի տիկնայք կ'որոշեն գանձաւակի շրջաբերու-
թիւնը զաղբեցնել, բանի որ զժուարին էր անոր հասոյթով անմիջա-
կան զարմաններ անօրինել, և անոր տեղ հանդանակութեան նպա-
տակաւ անձնական շրջապայութիւն մը կ'հաստատեն և անձամբ կը
շրջին տունէ տուն զբամական նպաստներ հաւաքելու, հաւանու-
թեամբ Պատ. Հոգարարձութեան, յօրուս սոյն զթուութեան յարկին :

1899 թն Հիւանդանոցի վիճակը հետեւեալ տողերով պատկե-
րացած կ'տեսնենք Ա. Մարտի 0 զոտ. 15 թուոյն մէջ .

« Հիւանդանոցի Պատ. Հոգարարձութիւնը կ'շարունակէ իր
նիւտներն ու հոգածութիւնը, թէև 500 ոսկւոյ պարտուց տակ ընկ-
նուած, որ զոյցած է պարագայից բերմամբ կամ աննախատեսու-
թեամբ :

« Հաստատուած կանոնադրով հիւանդաց համար սահմանուած
է շուրջ 70—75 անկողին և շատ հազիւ կ'պատահին այսքան հիւ-
անդներ . . . Ծերերու և անկարներու նկատմամբ սահմանուած է ձրի
ընդունիլ մի միայն անոր, անօղնական անտէրունջներն, իսկ տնե-
ւորներն կամ ունեւոր ազգական ունեցողները ընդունիլ որոշեալ ամ-
սաթոշակով : Տնտեսական տաղնապաներու առթիւ կամ առանց
նախատեսութեան ձրի ընդունուած են բաղմամբիւ ձերեր, պառու-
ներ, անկարներ, և այլն, որոնք համեմատաբար հիւանդաց կրկնա-
պատիկն և եռապատիկն են, այնպէս որ Հիւանդանոցի մէջ չամիտ-
վուելով ընդարձակ խորհրդարանն և սեղանատունն իսկ ձերանոցի
և ծոռաւեղի վերածուած է, և Մեծ. Գուկաս Երայեան, իր հան-
դուցեալ եղբոր կտակած զուամբէն մաս մը զորք զրած է ձերանոց
շինելու, որոյ բացման հանդէսն շատ ժամանակ չէ որ կատարուած

է Ս. Լուսաւորչի տօնին Ս. Առաջնորդի և բազմոցանոցան դասի քրհնութեամբ:

« Հիւանդանոցի պարտքն յառաջ եկած է զլուսաւորապէս կա- նոնադրի կանխապատեմ սահմանն չպահելէն և անխոր, ծեր կամ անկարող անուան առկ, ճրի հաց ուտողներու թիւն աւելցնելէն: Մարդասիրութիւնն եթէ լծորդուած չէ տրդարութեան հետ՝ կարող է խաբուիլ պատրուիլ և կարօտելոց բաժինն անկարօտներուն կամ պարասպրդներուն չամբել: Կան մարդիկ որոնք իրենց ծնողաց կամ ջարերարաց ստացուածքն իսկ վասնելէն զկնի՝ զանոնք անխղճա- բար Հիւանդանոց կ'ըրկեն . . . »

Այսպէս կուգանք կ'հասնինք 1900-1901 թուականներուն որք անգական վարչային, անասապետ, կրթական և այլ գործերը բոս բաւականին կանոնաւոր ուղղութեան մը մէջ մտած են՝ զոր- ծունի, բանիբուն ու պարտաճանաչ պաշտօնէութեանց շնորհիւ, որոնց կարգէն է նաև Հիւանդանոցի արլի Պաթ. Հոգարարձու- թիւնը որ՝ տարւոյս սկիզբէն 'ի վեր ընտրուած՝ օրինակելի և դժա- հասելի փութաշանութեամբ կ'շարունակէ իր մարդասիրական պաշ- տօնը, ջանալով ամեն հնարաւոր միջոցներն 'ի գործ գնել բարձրա- ցնելու համար Ազգին տունը իրեն արժանի զիրքին և արձատական բարենորոգումներով վերածել զայն իրապէս իր նպատակին ծառայող պատուարեր և բարեկարգ հաստատութեան մը, և այսպէս վայելելով հանրութեան զսնունակութիւնը և քարոյտկան ու նիւթական օժան- դակութիւնը:

Արլի Հոգարարձութեան անդամներն են՝ Նշան Հարենց՝ Առե- նապետ, Յովհաննէս Գ. Բաբազեան՝ Ատենադպրո, Վաղարշակ Ռսկանեան՝ Գաւճապետ, Յովհաննէս Գ. Գաղապղեան՝ Մատա- կարար, Մաքսուս Գալուսեան, Տօբթ. Տիգրան Սպարթալեան, Իսկ Խնամակալուհիք են, Տիկնայր՝ Վառլառէ Ս. Իվլիքճեան, Թազուհի Յ. Պալքըճեան, Շողակաթ Մ. Գալուսեան, Օրիորդը Զապէլ Սվաղեան, Մարի Սիմոնեան, որոնք իրենց կարգին զաջան գործունէութեամբ կ'կատարեն իրենց բաժին ինկած ժրջան գործունէութեամբ կ'կատարեն իրենց բաժին ինկած աշխատութիւնները, աչալուրջ հսկողութեամբ և կանոնաւոր այցելութեամբ հոգ տանելով հիւանդաց յառուկ ձերմակելինաց

և ընդհանուր մաքրութեան, կարուելու կարկառելու հանդերձից և այլ պիտոյից:

Որչափ որ Հիւանդանոցը ունի իր սեփական կալուածները — ընդհանրապէս բարեկեր ազգայիններէ կտակուած կամ նուիրուած — որոնք տարեկան բաւականաչափ դումար մը կ'կազմեն, սակայն ազգային ամեն անասկ և ամեն կարգի կալուածոց հասոյթները միակ անտուկի մը մէջ կեդրոնացնելու և անտի ազգային ամեն հիմ- նարկութեանց ծախքերը հայթայթելու գրութեամբ՝ Ազգ. արկղէն տարեկան զբէթէ 400 ոսկի միայն կ'վճարուի Հիւանդանոցի ծա- փուց համար, այն է ամսական 30 ոսկի, սակայն այս դումարը հա- զիւ մէկ երրորդը կ'կազմէ Հիւանդանոցի ծախուց անհրաժեշտ եղած ամսական 100 ոսկին, իսկ մնացեալ 70 ոսկին կ'գոյանայ Ա- Լուսաւորչի եկեղեցւոյ մամի և մասունքի հասոյթէ, տարեկրքէ, զան- ճանակէ, նուիրատուութիւններէ, հարսանեաց և մեռելոց սովիւ փոխան ծաղկէպտակի եղած նուէրներէ, թոշակաւոր հիւանդներէ և մերթ ընդ մերթ 'ի նպաստ Հիւանդանոցի արուած պարահանդէս- ներէ և նուազահանդէսներէ: Այս կերպով Հիւանդանոցի տարեկան հասոյթը կ'ընցուի մօտաւորապէս 1200 օսմ. ոսկիի, ինչ որ սա- կայն անբաւական կուգայ՝ հնարաւոր խնայողութեամբ վարուելով հանդերձ՝ հաստատութեանս ամեն ծախուց և պիտոյից:

Հիւանդանոցի այժմու բժշկական մարմինը կ'կազմեն՝ վերաբու- ժական ճիւղին համար՝ Տօբթ. Տիգրան Սպարթալեան, Տօբթ. Մաճառ և օգնական Տօբթ. Մալուրիլի, իսկ ներքին հիւանդա- թեանց համար՝ Տօբթ. Ռ. Ռոնճեան և Տօբթ. Բէթիաի, որոնք լուտ կարգի և պիտոյից կանոնաւորապէս կ'այցելին Հիւանդանոց, ճրի- աքար կ'գարմանն հիւանդները և կ'անօրինն զեղեքն ու տրուելիք կերակուրները:

Իսկ ներքին պաշտօնէից թիւն է 13, որք են Տեուշ (1) Դա-

(1) 1879 ի վերաշինուրեկեկ սխաւաղ տեսչակիս պաշտօն վարած եւն ձեռողեւոտ՝ Դեւոն Վ. Բիրդայիմեան, Մակար Վ. Բարխուշարեան, Ալեքսան Վ. Ռեճեան, Սարգիս Ա. Սարկաւազ Պարտիզպանեան, Սարգիս Միրիմանեան, Դեւոն Գաւանաչ Ծա- ղիկեան:

զարտ Հալաճեան, չորս այր հիւանդապահ, չորս կին հիւանդապահ, մէկ զեղազործ, մէկ վիրաբուժի օգնական, մէկ խոհարար և մէկ դռնապան:

Հողարարձութեան կարգադրութեան համեմատ Չորերշաբթի և Կիրակի օրերը կէսօրէ վերջ ժամը 1 և մինչև 6 ամին ազդոցին կարող է այցելել Հիւանդանոց ձրխապէս, իսկ ուրիշ օրեր հիւանդաց այցելութիւն աաղու փախարողներ պարտաւոր են վճարել մէկ կամ երկու դահեկան արծաթ՝ ըստ կարողութեան, ՚ի նպատակ սպասարարելոց:

Ընդհանուր պատասպարեալներու տրուած սնունդն է ընդհանրապէս՝ աւախը օրերը առատօտուն հաց, պանիր, սուրճ, կէսօրին միտով ապուր, երեկոյեան միտով եփուած կանաչեղէն մը (պաւտը), իսկ պահէր օրերը՝ առատօտուն հաց, ձիթապտուղ և սուրճ, կէսօրին խաշած ընդեղէն մը իւղ բացախով կամ բիւլով, երեկոյին՝ կանաչեղէն ձիթախլոզով, կիրակի՝ մաքարնա: Իսկ հիւանդաց կ'որուին՝ բժշկին յանձնարարութեան և հիւանդութեան տեսակին համեմատ՝ կաթ, հաւկիթով կաթ, ժուր ջուր, խորոված միս, և այլն:

Ներկայիս մէջ Հիւանդանոցը կ'գտնուին 25 հիւանդ այր ու կին, 15 յիմար այր և կին, 26 ծեր և ապուշ, 13 Պաշտօնեայ, համադուժար 79:

Ինն տարուան շրջանի մէջ (1889—1897) Հիւանդանոց մտած են՝ Հայ, Թուրք, Բողոքական, Կաթոլիկ, Գերմանացի, Պարսիկ և Հրեայ՝ 3882 հիւանդներ, որոցմէ 267 մեռած են, իսկ 3615 առողջանալով մեկնած:

Հակառակ մեր բրած մանրակրիլտ հետազոտութեանց՝ ո՛չ Հիւանդանոցի և ո՛չ Ազգ. Առաջնորդարանի Գիւանատան մէջ կրցանք գտնել 1879 ի վերաշինութենէն առաջ գրուած ո՛ր և է սոմար արձանագրութեան կամ հաշուակարութեան. հազիւ 83—84 թուականներէն սկսեալ բանի մը թերի և անկանոն հաշուեցոյցներ անցան մեր ձեռք Գիւանատունէն, որոնցմէ մէկ երկու հատ թուականի կարգաւ կ'օրինակենք Տեղեկագրիս վերջը, զէթ վեր ի վերոյ զաղախար մը կարգակարգ համար Հիւանդանոցի ելմտախան ու մասակարարութեան վիճակին վրայ:

Ն Ա Շ Ո Ւ Ե Ց Ո Յ Ց
Ս. ԱՌԻՍԹՈՐՈՐԵՍԵՍԻ ԶԻՔԱՉՓԱՆՈՅԹ
1893 ՅՈՒՆԻՍԻՆ 1894 ՅՈՒՆԻՍԻ

Մ Ո Ւ Տ Ք

Գ. անձնաճանճերէ	20216	Միս, ուտելի օրեր 42-14 օրս, պահէր օրեր 4-5 օրս	28800
Հարսնակիցներէ	900	Ալիւր, ամիսը 700 օրս	48000
Հանգեաներէ	479	Հագուստ, անկողին, վերմակ, բլանդէթ, սաքո	9700
Ներքե տօններ Ս. Գրեգոր Լուսաւորչի	2235	Գեղեր, գործիքներ — կարագ, ձէթ, սուսած իւղ ևն.	48373
Հսկում, մասուկք բանալ	404	Կանանչեղէն, պանիր, մաքարնա, չէրիկէ	10500
Կնիքները պաշտօններէ	917	Աճուս, փայտ 7 չէթի ամիսը	8040
Թափուք մամլիկ	557	Միսխոտաւորներ 48-20 օրս, կարծաւոր 80-125 օրս	8400
Գաւառակներու մորթներէ	286	Խաչիկ — ամիսը 5-6 օրս, շագար 42 օրս	2400
Մարտուած հին լաթերէ	221	Պնակ, բամակ, գոյլ — պատասպարող, դգաւ ևն.	1200
Պարտեղի տարեկան վարձքը	434	Հաց շարդիք և եփողէք, Աղ, օճառ, ձու, ֆրանձէլա	4992
Արքայապետներէ	200	Կոշիկ, հորթմակ, բանթուճիկէր, չգարա ևն.	2400
Խառնակներու վարձքերէ	7524	Պահէր, հարուսի, անկր, կարողէք, ևն	4800
Երկաթ ու ցիւն եկած հիւանդաց համար լոկերութեան	7466	Լոխ, բացախ, սխտոր, չէմէն, ֆիսիօն, պիպեր	600
Պատասխանէն 1000 մէճիտի 3 ամսուան տոկոսը	660	Մուսուշիկ պատասպարու, գերեզման փորելու	900
Ձր հանին տարեկալը 10 կրոս	1780	Գինի, բանթմիսն, լոպիտ, պէրիլձէ, բակլա, ճօրտաւ	300
Մոմի քանակ տարեկալը	2120	Անկար, թուղթ, գրիչ, սրարմանէթ, մրգեղէն ևն.	2280
Հիւանդներէ և մեռեալներէ	41722	Լուսալիկ, ամիսը 2 անգամ	4320
Կուր 13 կիլո	2314	Տրորակ, հաճեմէթ, սրիւն, ձիւն, սկրա ևն.	480
Հիւանդանոց բնակողներու մշտնջենաւորներ	7873	Կրկն, փայլուղ, պատրոյք լամպ շէշ, պղինձները անագեւու	2640
Ազգային Արկիւն	75240	Աւել, ֆրչտ, ձամի մարթ, մայրեւու օրողէք	325
Կուր եղած ուտեալի և այլի սրճեք	3749	Թօմաթի սպախ, մեղր, ձիթապտուղ	600
		Եկեղեցւոյ շապիկ, խուշիկ, հորթմակ, կարողէք	21000
		Պատահական ծախքեր, տաւը պաշտօնեայ ամսական	151735

օտ. ոսկին 478 Գրուէն

Մ Ո Ւ Տ Ք

Շ. Ա Ռ Ի Մ Խ Ի Ռ Ր Զ Ե Մ Ս Ա Ջ Փ. Հ Ի Ի Մ Ս Փ Մ Ե Ս Պ Պ Յ Ի

1890 ՅՈՒՆԻՍ 1 - 1891 ՅՈՒՆԻՍ 30

Հ Ա Շ ՈՒ Ե Կ Շ Ի Ռ

Մ ՈՒՏՔ	Մ ՈՒՏՔ	Մ ՈՒՏՔ
Նախորդ տարուան և պատրաստ գրամ	Նախորդ տարուան և պատրաստ գրամ	Նախորդ տարուան և պատրաստ գրամ
Տնտեսական խորհուրդէ	Տնտեսական խորհուրդէ	Տնտեսական խորհուրդէ
Երևանահայոց վարչաք	Երևանահայոց վարչաք	Երևանահայոց վարչաք
Վարչաքի տան վարչաք	Վարչաքի տան վարչաք	Վարչաքի տան վարչաք
Մանկ. թագարկ պատասխանաւորներ	Մանկ. թագարկ պատասխանաւորներ	Մանկ. թագարկ պատասխանաւորներ
Նուէր պրոքուրներ	Նուէր պրոքուրներ	Նուէր պրոքուրներ
Նորստանկան	Նորստանկան	Նորստանկան
Օտարագներէն ետէր	Օտարագներէն ետէր	Օտարագներէն ետէր
Տարեկիբ	Տարեկիբ	Տարեկիբ
Վարչաք Տնտեսականներ	Վարչաք Տնտեսականներ	Վարչաք Տնտեսականներ
Այլտրի երկրներու հետ	Այլտրի երկրներու հետ	Այլտրի երկրներու հետ
Մատամ Ապոլիբ	Մատամ Ապոլիբ	Մատամ Ապոլիբ
Հրահրականոց մեղսորդներէն խոչը	Հրահրականոց մեղսորդներէն խոչը	Հրահրականոց մեղսորդներէն խոչը
Ա. Արտադրաւոր տնտեսականներէն	Ա. Արտադրաւոր տնտեսականներէն	Ա. Արտադրաւոր տնտեսականներէն
Հրահրականոց խոչը	Հրահրականոց խոչը	Հրահրականոց խոչը
Պաշտօնէ և մատուցէ	Պաշտօնէ և մատուցէ	Պաշտօնէ և մատուցէ
Վաճառուան քուրճէրէն	Վաճառուան քուրճէրէն	Վաճառուան քուրճէրէն
Թրահրականոց խոչը	Թրահրականոց խոչը	Թրահրականոց խոչը
Հրահրականոց պարտէզի տնտեսական վարչաք	Հրահրականոց պարտէզի տնտեսական վարչաք	Հրահրականոց պարտէզի տնտեսական վարչաք
ՅՏ կար վերաբուժական գործիներու համար Տնտեսականներէն	ՅՏ կար վերաբուժական գործիներու համար Տնտեսականներէն	ՅՏ կար վերաբուժական գործիներու համար Տնտեսականներէն
3903 75	3903 75	3903 75
153645 75	153645 75	153645 75

Ս. Ա Ռ Ի Մ Խ Ի Ռ Ր Զ Ե Մ Ս Ա Ջ Փ. Հ Ի Ի Մ Ս Փ Մ Ե Ս Պ Պ Յ Ի

Մ ՈՒՏՔ

Շ. Ա Ռ Ի Մ Խ Ի Ռ Ր Զ Ե Մ Ս Ա Ջ Փ. Հ Ի Ի Մ Ս Փ Մ Ե Ս Պ Պ Յ Ի

1895 ՄԱՅԻՍ 1 - 30 ԱՊՐԻԼ 1897

Հ Ա Շ ՈՒ Ե Կ Շ Ի Ռ

Մ ՈՒՏՔ	Մ ՈՒՏՔ	Մ ՈՒՏՔ
Նախորդ տարուան և պատրաստ գրամ	Նախորդ տարուան և պատրաստ գրամ	Նախորդ տարուան և պատրաստ գրամ
Տնտեսական խորհուրդէ	Տնտեսական խորհուրդէ	Տնտեսական խորհուրդէ
Վարչաքի տան վարչաք	Վարչաքի տան վարչաք	Վարչաքի տան վարչաք
Մանկ. թագարկ պատասխանաւորներ	Մանկ. թագարկ պատասխանաւորներ	Մանկ. թագարկ պատասխանաւորներ
Նուէր պրոքուրներ	Նուէր պրոքուրներ	Նուէր պրոքուրներ
Նորստանկան	Նորստանկան	Նորստանկան
Օտարագներէն ետէր	Օտարագներէն ետէր	Օտարագներէն ետէր
Տարեկիբ	Տարեկիբ	Տարեկիբ
Վարչաք Տնտեսականներ	Վարչաք Տնտեսականներ	Վարչաք Տնտեսականներ
Այլտրի երկրներու հետ	Այլտրի երկրներու հետ	Այլտրի երկրներու հետ
Մատամ Ապոլիբ	Մատամ Ապոլիբ	Մատամ Ապոլիբ
Հրահրականոց մեղսորդներէն խոչը	Հրահրականոց մեղսորդներէն խոչը	Հրահրականոց մեղսորդներէն խոչը
Ա. Արտադրաւոր տնտեսականներէն	Ա. Արտադրաւոր տնտեսականներէն	Ա. Արտադրաւոր տնտեսականներէն
Հրահրականոց խոչը	Հրահրականոց խոչը	Հրահրականոց խոչը
Պաշտօնէ և մատուցէ	Պաշտօնէ և մատուցէ	Պաշտօնէ և մատուցէ
Վաճառուան քուրճէրէն	Վաճառուան քուրճէրէն	Վաճառուան քուրճէրէն
Թրահրականոց խոչը	Թրահրականոց խոչը	Թրահրականոց խոչը
Հրահրականոց պարտէզի տնտեսական վարչաք	Հրահրականոց պարտէզի տնտեսական վարչաք	Հրահրականոց պարտէզի տնտեսական վարչաք
ՅՏ կար վերաբուժական գործիներու համար Տնտեսականներէն	ՅՏ կար վերաբուժական գործիներու համար Տնտեսականներէն	ՅՏ կար վերաբուժական գործիներու համար Տնտեսականներէն
216 50	216 50	216 50
428945 50	428945 50	428945 50

Ս. Ա Ռ Ի Մ Խ Ի Ռ Ր Զ Ե Մ Ս Ա Ջ Փ. Հ Ի Ի Մ Ս Փ Մ Ե Ս Պ Պ Յ Ի

Ս. Ա Ռ Ի Մ Խ Ի Ռ Ր Զ Ե Մ Ս Ա Ջ Փ. Հ Ի Ի Մ Ս Փ Մ Ե Ս Պ Պ Յ Ի

Ս. Ա Ռ Ի Մ Խ Ի Ռ Ր Զ Ե Մ Ս Ա Ջ Փ. Հ Ի Ի Մ Ս Փ Մ Ե Ս Պ Պ Յ Ի

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Ի Ի Ն

Մօտաւորապէս մէկ ու կէս դարէ ՚ի վեր գոյութիւն ունեցող այս մարդասիրական հիմնարկութեան անցելոյն և ներկային համա-
 ոտապիծ պատկերը ներկայելէ յետոյ՝ կ'մնայ բանի մը բառով բա-
 ցատրել նաև՝ թէ ի՛նչ է մեր Ազգ. Հիւանդանոցի կարեւորութիւնը
 ներկայիս մէջ և թէ որո՞նք են այն կարօտութիւնները որոնց գոհա-
 ցումը պիտի կրնայ տալ փափաքելի կատարելագործութիւնը Ազգին
 Տան :

Իզմիր, իբր Փոքր Ասիոյ ամենէն վաճառաշահ նաւահանդիստը,
 շնորհիւ մեր լուսամիտ, յոռաջգիմասէր և բարեգութ Օգոստափառ
 Սուրբան Ապս - Խոյ - Համիտ Բ. Կոյսեր՝ սարուէ տարի յա-
 սաջղիմելու շաղին մէջ է առեւտրական և բազմաբարձութեան կրկ-
 նակ տնտեսկետով և իր այս զարգացուն և բարգաւաճ վիճակը, մա-
 նաւանդ ծովային և ցամաքային հաղորդակցութեան համար ընձե-
 ոսած զիւրին ու արագ միջոցները պատճառ կ'ըլլան զանազան ազ-
 գաբնակութեանց օր ըստ օրէ աճման : Իզմիրի բնակչութեան այս
 յարաճուն ընթացքը և կարևոր կեդրոններու հետ ունեցած վաճառա-
 կանական ընդարձակ յարաբերութիւնները բնականաբար բացատիկ
 կարևորութիւն մը կ'ընծայեն ո՛չ միայն բազարին՝ այլ նաև տարբեր
 հասարակութեանց պատկանող հանրօգուտ և բարեսիրական հաս-
 տատութեանց և կ'շեշտեն այս վերջնոց աւելի կատարուն կազմա-
 կերպութիւն մը ունենալու պէտքը :

Այս տեսակ հաստատութեանց կարգէն է նաև մեր Ազգ. Հի-
 ւանդանոցը որ երկար տարիներ ո՛չ միայն հայ՝ այլ և ամեն կրօնի
 և ցեղի պատկանող հիւանդներ անխափր խնամած ու դարմանած է և
 կ'դարմանէ ՚ի զին մեծամեծ զոհողութեանց և հայ յողովրդին քուս-
 կէն ելած գումարներու, ինչ որ պատիւ կ'ըրեր իր մարդասիրական
 զգացմանց : Այսօր, սակայն, այդ բարոյական և նիւթական զոհա-
 դութեանց պէտքը աւելցած է և Հիւանդանոցի ունեցած այժմու եկա-
 մուտները անբաւական կուզան ստկալու անոր յարաճուն պիտայից

և ծախուց. մէկ կողմէն անտեսական և այլ բազմատեսակ պատ-
 ճաններու բերմամբ Իզմիրի Հայ բնակչութիւնը օր օրի կ'ստուարա-
 նայ գաւառացի ամուրի կամ ամուսնացեալ պանդուխտներով, միւս
 կողմէն ներքին հեռաւոր կամ մօտաւոր գաւառներէ հայ հիւանդներ
 և ախտաձէտներ ծախուց և երթեւեկութեան մասին աւելի զիւրու-
 թիւններ կ'գտնեն զիմելու Իզմիր՝ դարմանուելու և բոյժ գտնելու հա-
 մար իրենց հիւանդութեան : Ահա այս նկատուեցերով Իզմիրի Ազգ.
 Հիւանդանոցը բացատիկ հանդամանք մը կ'ստանայ և հետևաբար
 բացատիկ միջոցներու կ'կարօտի արդի բազմապահանջ պէտքերուն
 գոհացում տալու համար :

Ազգ, Յանձնաժողովս յոյժ բարեգէտ առիթ մը կ'կարծէ Ազգ.
 Հիւանդանոցին Հարիւրամիտ յորելեանի հանդէսը՝ զիմելու համար
 մեր մօտաւոր և հեռաբնակ տոհմակիցներուն և կոչում՝ ընելու ա-
 նոնց զթութեան և մարդասիրական զգացմանց, մասնաւոր ընելով
 այն մի բանի անհրաժեշտ պէտքերը որոնց իբրագործումը ճշմարիտ
 բարիք մը պիտի ըլլայ զժբաղ պատասպաններուն և զթութեան գե-
 ղեցիկ զործ մը՝ բովանդակ հայ ցեղին պատուաբեր :

Ահաւասիկ մեր ակնարկած պէտքերը :

Հիւանդանոցը պէտք ունի տարափոխիկ և մասնաւորապէս հիւ-
 ծախտի հիւանդութեամբ վարակուածներու համար առանձին շէնքի
 մը : Աւելորդ է ըսել թէ որչա՛փ վտանգաւոր և հակառոյջական է
 այս կարգի հիւանդներուն յատկացնել այն միեւնոյն սենեակները
 ուր բոժեղի և թեթև հիւանդներ կ'դարմանուին :

Հիւանդանոցը պէտք ունի կանոնաւոր յիմարանոցի մը : Խղճի և
 զգացման պարտք մըն է մանաւանդ այս վերջնոյն շինութիւնը, վտան-
 զի հաստատութիւնս իր հիմնարկութեան օրէն ի վեր չէ ունեցած յի-
 մարներու յատուկ բաժին մը ուր մտքի այլ տարաբաղ զհիւանդները
 կարենան վտայել պահանջուած բժշկական-դիտական դարմանները,
 թէև՝ ասոր հակառակ՝ միշտ աւելի կամ նուազ թիւով անպակաս
 եղած են Հիւանդանոց զիմող խելագարներ, որոնց ո՛չ թէ բուժումը՝
 այլ գոնէ հանդիստ պատասխարումը և մարդասիրաբար խնամուիլը
 մեծ սփոփանք մը պիտի ըլլար այդ զժբաղներու պարագայից :

Հիւանդանոցը անհրաժեշտօրէն պէտք ունի պահեստի գումարի

Վր՝ առաջն աննելու համար պատահական դէպքերու, անակնկալ ձախարչութեանց և այն ամեն հատանական պատահարներու սրտեր կրնան յառաջ գալ՝ յողովրդական նպատակները զարեցնող և եկամտից ազրիւրները ցամբեցնող ընդհանուր առեարական տաղնապններէ:

Այս պէարերը լրացնելու համար յօտաւորապէս 1500 ոսկի անհրաժեշտ է, գումար մը գոր հայթայթելու համար Յանձնաժողովըս չվարանիր զիմելու հայ յողովրդեան ամեն գաստկարգի անհատներու, մանաւանդ մեծատուններու տատաձեւնութեան և զթարտութեան, որուն փորձը բազմիցս ցոյց տուած են անցելոյն մէջ և հարիւր յիսուն տարուան հաստատութիւն մը իր գոյութիւնը պահած է և պիտի պահէ յետ այսու՝ աւելի պայծառ և աւելի բարեկարգ միճակի մէջ՝ շնորհիւ հայ ցեղին յատուկ մարդասիրական ու սղորմա՝ աէր զգացմանց:

ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՐԻՐԱՄԵՆՅ ՅՈՒՅՈՒՅՆԵՐ

Ատենապետ ՆԱԶԱՐԷԹ Հ. ՆԵՐՍԷՍԵԱՆ

Ատենադպիր Ա.ԻԵՏԻՍ ՏԻՎՐԻԿԵԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ՆԱՒԱՍՏՐԳԵԱՆ

ՀԱՆՏ Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՀԱՆՆԷՍ Գ. ԲԱՐԱԶԵԱՆ



« Ազգային գրադարան



NL0212648

43.345

Monceur

Quakin Takouewitch Tchabalbachian

Tiflis

(Gauzaro)

Russie

